

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

ճաքեր Ռուսաստան-Իրան Յարաբերություններուն Սեջ

Ուքրանիոյ պատերազմին որպէս հետեւեալ խզուցեցան Ռուսաստան կապերը Արեւմուտքի հետ ու Մոսկուան սկսաւ իր յարաբերութիւնները զարգացնել Չինաստանի, Հիւսիսային Թորայի, Իրանի եւ ի վնաս Հայաստանի՝ Ատրպէյճանի հետ:

Վերջերս Իրանի Իսլամական Հանրապետութեան հետ Ռուսաստանի ունեցած սերտ յարաբերութիւններուն մէջ յայտնուեցան տարածայնութիւններ՝ երբ Մոսկուան «Չանգեզուրի միջանցքի» հարցով սկսաւ սատարել Ատրպէյճանի տեսակետներուն:

Վերջին մի քանի տարիներուն Մոսկուան սկսած է աւելի ու աւելի յենիլ Իրանի վրայ, որպէսզի կարողանայ համալրել այն զինատեսակները, որոնք ռուսական բանակը կը կորսնցնէ պատերազմի դաշտին վրայ: Տակաւին այս շաբաթ Ուաշինգթոն իր դաշնակիցներուն տեղեկացուց, որ Իրան փոքր հեռահարութեան «պալիստիք» հրթիռներ փոխանցած է Ռուսաստանին՝ Ուքրանիոյ դէմ գործածուելու համար: Թէեւ Թեհրան կը հերքէ այս տեղեկութիւնները, սակայն առաջին անգամ չէ, որ Իրան իր զինանոցը կը բանայ Ռուսաստանի առջեւ:

Հետեւաբար, երբ վերջերս Ռուսաստանի արտաքին գործոց նախարար Սերկէյ Լաւրով Պաքուի մէջ յայտարարեց, որ Հայաստան «սապօթի» կ'ենթարկէ 44-օրեայ պատերազմի աւարտին ստորագրուած եռակողմ յայտարարութեան 9-րդ կէտի գործադրումը, որ կը վերաբերի ճանապարհներու բացման, Իրանի ղեկավարութեան մօտ յառաջացան դժգոհութիւններ:

Մոսկուայի տեսակետը այն է թէ, այդ կէտը կը նախատեսէ իր գործերու տեղակայումը Ատրպէյճանը նախնջեալին կապող ճանապարհին վրայ: Այս մեկնաբանութիւնը ընդունելի չէ Հայաստանի համար, որուն վարչապետը այս օրերուն իսկ յայտարարեց, որ Նոյեմբերի 9-ի յայտարարութեան մէջ չկայ այնպիսի դրոյթ, որով ՀՀ որեւէ տարածքի վրայ պէտք է լինի այլ երկրի վերահսկողութիւն:

Վերջին տարիներուն Ատրպէյճան կը պահանջէր Հայաստանի Սիւնիքի մարզով միջանցք, որպէսզի իր քաղաքացիները առանց ստուգման երթելէ կեն Իրանի սահմանի մօտով անցնող ճանապար-

«Նոյեմբերի 9-ի Յայտարարութեան Սեջ Չկայ Այնպիսի Դրոյթ, Որով ՀՀ Որեւէ Տարածքի վրայ Պէտք է Ըլլայ Այլ Երկրի Վերահսկողութիւն», Ըսաւ Փաշինեան

«Երեւանեան Երկխօսութիւն» միջազգային համաժողովի ժամանակ վարչապետ Նիկոլ Փաշինեան ըսաւ, որ Նոյեմբերի 9-ի յայտարարութեան մէջ չկայ այնպիսի դրոյթ, որով ՀՀ որեւէ տարածքի վրայ պէտք է լինի այլ երկրի վերահսկողութիւն:

Վարչապետը ներկայացուց խղաղութեան պայմանագրի շուրջ ՀՀ դիրքորոշումը՝ անդրադառնալով սահմանազատման գործընթացին մէջ վերջին շրջանին ունեցած արդիւնքներուն:

«Ունենք էական տեղաշարժ, Հայաստանի ու Ատրպէյճանի համապատասխան յանձնաժողովները վերջերս ստորագրել են սահմանազատման յանձնաժողովների համատեղ գործունէութեան մասին կանոնակարգը, որում արձանագրուած է այն, ինչի շուրջ կողմերը յայտարարել են ճշմարիտ հանդիպման հաղորդագրութեան մէջ: Տարածաշրջանում իրադրութեան գնահատման ու տեւական խաղաղութեան հաստատման առումով կարեւոր է տարածաշրջանային հաղորդակցութիւնների բացումը:

«ՀՀ կառավարութեան որդեգրած «խաղաղութեան իրազմերուկ» նախագծով նախատեսուած է տարածաշրջանային կապուղիների



Նիկոլ Փաշինեան ելոյթ կ'ունենայ «Երեւանեան Երկխօսութիւն» միջազգային համաժողովի ժամանակ

բացում ոչ միայն Հայաստանի ու Ատրպէյճանի միջեւ, այլեւ ենթադրուած է, որ նման զարգացում պէտք է լինի Հայաստանի ու Թուրքիայի միջեւ:

««Խաղաղութեան խաչմերուկը» մեզ համար կարեւոր է նաեւ այն պատճառով, որ դրանով հնարաւորութիւն ենք ստանում երկաթուղային կապ ունենալ Իրանի հետ, ում հետ յարաբերութիւնները

շատ կարեւոր են մեզ համար, հնարաւորութիւն ենք ունենում երկաթուղային կապ ունենալ Թուրքիայի, Եւրոպայի, Ռուսաստանի հետ: Ատրպէյճանին էլ հնարաւորութիւն է ունենում Հայաստանի տարածքով երկաթուղային կապ ունենալ Թուրքիայի, Իրանի հետ: Այստեղ կարեւոր է նաեւ Նախիջեւանի ու

Հայաստանը Եւ Եւրոպական Միութիւնը Կը Մեկնարկեն Մուտքի Արտօճագրերու Ազատականացման Շուրջ Երկխօսութիւնը



ՀՀ կառավարութիւնը եւ Եւրոպական Յանձնաժողովը հանդէս եկած են համատեղ մամուլի հաղորդագրութեամբ՝ նշելով, որ Երեւանի մէջ Հայաստանի Հանրապետութեան եւ Եւրոպական Յանձնաժողովի կողմէ յայտարարուեցաւ մուտքի արտօճագրերու ազատականացման շուրջ Երկխօսութիւնը մեկնարկած է:

Այս գործընթացին նպատակն

է աջակցիլ Հայաստանին՝ սահմանելու առանց մուտքի արտօճագրերու դէպի ԵՄ երկիրներ կարճաժամկէտ այցերու համար՝ արդիւնաւէտ կառավարող շարժունակութեան եւ անվտանգութեան անհրաժեշտ պայմաններու ապահովմամբ:

Մուտքի արտօճագրերու շուրջ

ԱՄՆ Կ'աւելցնէ Հայաստանին Տրամադրուող Ներդրումները

ԱՄՆ-ն 130 միլիոն տոլարով կ'աւելցնէ ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալութեան կողմէ Հայաստանին տրամադրուելիք ներդրումը՝ հասցնելով 250 միլիոն տոլարի:

«Յաւելեալ ֆինանսական ցուցանիշները կը նախատեսուի ուղղել արդիւնաւէտ եւ հաշուետու կառավարման հաստատութեանականացման, քաղաքացիական մասնակցութեան՝ յանուն ժողովրդավարական համախմբման, տնտեսական կառավարման ուժեղացման, թիրախային ոլորտներու մրցունակութեան բարձրացման, բնական պաշարներու կայուն կառավարման բարելաւման:

«Փոփոխութեան նախագիծի ստորագրում պիտի նպաստէ համաձայնագրով սահմանուած հիմնական նպատակներու իրականացման՝ արդիւնաւէտ եւ հաշուետու կառավարման, ժողովրդավարական ձեռքբերումները պահպանելու, ինչպէս նաեւ տնտեսական մարտահրաւէրները յաղթահարելու ուղղութիւններով»,- նշուած է որոշման հիմնաւորումներուն մէջ:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

«Դիմադրութեան» Շարժման «Սրբազան» Շարունակութիւնը. Առաջիկայ Զաւարթին Իրական Շահառուները Դուրս Կը Գա՞ն «Փարոյի Զետեւից»

ՅԵՂԻՆԵ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Վազգէն (Բագրատ) Գալստանեանի գլխաւորած շարժման աշխատանքները սեզոնի անդրանիկ հանրահաւաքը նախանշած էր Սեպտեմբերի առաջին շաբաթը՝ 4-ին, սակայն, ինչպէս գրել է լրատուամիջոցներէրից մէկը, այն յետաձգուել է եւ տեղի կ'ունենայ Սեպտեմբերի 22-ին: Որպէս պատճառ նշուած է մարզահամերգային համալիրի մեծ դահլիճի «Ռեզերվի» հանգամանքը, թէ իբր տնօրինութիւնը «Հրաժարուել է շարժման նախանշած օրերին մեծ դահլիճ տրամադրել միջոցառման համար՝ պատճառաբանելով, որ այդ օրը միջոցառումներ կան նախապէս ծրագրուած»:

Բանակցութիւններէրից յետոյ համալիրը, ի վերջոյ, համաձայնել է Սեպտեմբերի 22-ին մեծ դահլիճ տրամադրել ընդդիմադիր շարժմանը, ուստի մեծ հաւաքը կը կայանայ այդ օրը:

Յիշեցնենք՝ դեռ Օգոստոսին Գալստանեանը յայտարարել էր, թէ «Համալիրի մեծ դահլիճը մերժել են եւ քանի որ այլ մեծ դահլիճներ չկան Երեւանում կամ Հայաստանում, ստիպուած որոշակի իմաստով կոմպրոմիսի են գնացել թէ՛ օրուայ, թէ՛ դահլիճի առումով: «Բայց դա զուտ պայմանա-

ւորուած է տեղի հետ, այն, ինչ մենք նախատեսել ենք, գոնէ դրա ինչ-որ մասով կարողանանք իրականացնել», - ասել էր նա:

Այսինքն՝ Գալստանեանն ակնարկել էր, թէ իրենք մեծ՝ գրանդիոզ, բազմամարդ միջոցառում անելու մտադրութիւն ունեն, բայց, ահա, այն իրագործելու համար դահլիճ գտնելու խնդրի են բախուել: Այժմ, փաստօրէն, հաւաքը յետաձգելով ու համալիրի մեծ դահլիճում անցկացնելով՝ կարողանալու են ապահովել միջոցառման «գրանդիոզութիւնը»:

Մինչ այդ, սակայն, կարելի է փոքր-ինչ հաշուարկ անել. համալիրի համերգային (փոքր) դահլիճը մօտաւորապէս ունի 1900 տեղ, իսկ հիմնական դահլիճը՝ 6000 նստատեղ, որն ընդլայնուելով կարող է ունենալ մինչեւ 8800 նստատեղ: Այսինքն՝ պարզագոյն հաշուարկը յուշում է, որ յետաձգուած հաւաքին առաւելագոյնը կարող է մասնակցել շուրջ 9 հազար մարդ՝ մի քանի անգամ աւելի քէ, քան Մայիսի 9-ի եւ դրան յաջորդած հանրահաւաքներին:

Ուշագրաւ է, որ բացօթեայ հանրահաւաք անելու փոխարէն որոշուել է փակ-դահլիճային հաւաք անել, այն էլ այն դէպքում, երբ Սեպտեմբերը եղանակային առումով հոյակապ, եթէ կ'ուզէք՝

թաւշեայ սեզոն է հէնց բացօթեայ միջոցառումներ անելու համար (ի տարբերութիւն Ապրիլ-Մայիսի, երբ գրեթէ օրումէջ անձրեւում էր ու «համարում» հայրենափրկութեան սրբազան գործը):

Արդ, ումի՞ց կամ ինչի՞ց է վախենում շարժման կազմակոմիտէն, որ որոշել է փողոցի, հրապարակի փոխարէն նախընտրել դահլիճն ու «Չորս պատը»: Հաստատ՝ ոչ եղանակից, այլ, կարելի է ենթադրել, մարդաբանակ ապահովել չկարողանալու մտավախութիւնից դրդուած, քանի որ եթէ Սեպտեմբերին տեղի չունենայ խոստացուած «բումը», ապա վերջնականապէս կ'արձանագրուի շարժման կապիտուլիացիան՝ դրանից բխող խայտառակութեամբ:

Նկատենք, որ շարժման նախկին համառաջնորդ Սուրէն Պետրոսեանի՝ Հ1-ին տուած սկանդալային հարցազրոյցից յետոյ այլեւս հակառակ է, թէ որտեղ կ'անցկացուի յառաջիկայ հանրահաւաքը, ինչ ֆորմատով:

Դատելով շարժման ներքին խոհանոցի վերաբերեալ Պետրոսեանի բացառականներէրից՝ այն «Դիմադրութեան շարժում-2»-ն է, որի կուլիսային շահառուները Ռոբերտ Քոչարեանը եւ Սերժ Սարգսեանն ու նրանց շուրջ համախմբուած մարդիկ են, որոնք, փաստօրէն, օգտագործելով եկե-

ղեցին՝ ի դէմս դրա սպասաւորի, իշխանազաւթման նոր «Վարիացիան» են փորձում խաղարկել:

«Բագրատ սրբազանը, այո, առաջնորդել է շարժումը, բայց էնտեղ խորքային ներգրաւուածութիւն են ունեցել ուժեր, որոնց ներգրաւուածութիւնը, պրոցեսի վրայ ազդեցութիւնն ինձ համար եղել է «Կարմիր գիծ»...: Ես մի քանի անգամ յայտարարել եմ, ասել եմ՝ Մայիսի 9-ին մարդիկ հաւաքուել են հրապարակում երկու բան լսելու համար, որ՝ ներկայ իշխանութիւնը պիտի գնայ, բայց միեւնոյն ժամանակ նախկին որեւէ իշխանութիւն չպէտք է վերարտադրուի: Առաջին պահանջը հնչեց, երկրորդը մասին՝ ոչ մի բառ: Ես Մայիսի 26-ին նոյնիսկ՝ թուղթը իմ ձեռքում էր, ես պիտի խօսեի ու ասեի, որ նախկին որեւէ վարչակարգ չի վերարտադրուելու: Մայիսի 9-ի եւ Յունիսի 9-ի հանրահաւաքին ես դրա համար բեմ դուրս չեմ եկել, որ էդ բառը չասեմ», - անկեղծացել էր Պետրոսեանը:

Հարցադրմանը՝ շարժումը կառավարում էին նախկին իշխանութիւնները, Պետրոսեանն արձագանքել էր. «չեմ կարող ասել՝ հենց բուն իրենք, բայց իմ տեսածով խորքային, հիմնական ազ-

Շար.ը էջ 18

Հայաստանի «Բրիկս-Կրիզը» Դեպի Կազան

ՅԱԿՈՔ ԲԱՂԱԵԱՆ

Տեղեկութիւնը, որ Նիկոլ Փաշինեանը պատրաստուած է մասնակցել Հոկտեմբերին Ռուսաստանում կայանալիք ԲՐԻԿՍ գագաթնաժողովին, Հայաստանում առաջացրել է որոշակի բուռն քննարկումներ: Ընդ որում, այդ քննարկումները գերազանցապէս կեդրոնացած են Ռուսաստան-Արեւմուտք «աւանդական» տրամաբանութեան մէջ, այն դէպքում, երբ Ռուսաստանից բացի ԲՐԻԿՍ անդամ են երկրներ, որոնց հետ Հայաստանն ունի ընդհանուր քաղաքական շահեր, կարեւոր տնտեսական եւ ռազմական գործակցութիւն, պատմաքաղաքական, մշակութային, քաղաքակրթական բնոյթի յարաբերութիւնների հակա հետագծեր՝ Հնդկաստան, Եգիպտոս, Իրան, Չինաստան:

ԲՐԻԿՍ անդամ է Պրագիլիան, որ Հայաստանի հետ ունի աւանդական սերտ բարեկամական յարաբերութիւն: Հարցն այն է՝ անշուշտ, որ այդ ամէնը «փոխհատուցում» է Ռուսաստանի անդամութեան հանգամանքը: Հայաստանը պէտք է արդիւնաւէտ յարաբերութեան ձգտի համաշխարհային քաղաքականութեան բոլոր առանցքային խաղացողներին, այդ թւում Ռուսաստանի հետ: Հարցն այն է, որ ԲՐԻԿՍ սահմանափակ, նեղ դիտարկումը թոյլ չի տայ տեսնել համաշխարհային պրոցեսների մի հական, կարեւոր մաս, որ ծաւալուած է նաեւ այդ հարթակի ընդգրկումով: Առաւել եւս, որ այդ հարթակը ըստ էութեան գերազանցապէս կազմաւորուած է այն անմիջական աշխարհագրական միջավայրով, որը

Հայաստանի կենսագործունէութեան տարածութիւնն է:

Աւելին, թերեւս քչերն են յիշում, որ նախորդ տարի ԲՐԻԿՍ գագաթնաժողովին մասնակցելու ցանկութիւն յայտնել էր ընդհուպ Ֆրանսայի նախագահ էմանուէլ Մակրոնը, որն այդ նպատակով դիմել էր 2023 թուականի գագաթնաժողովը հիւրընկալող Հարաւարիկեան հանրապետութեան նախագահին: Մակրոնի մասնակցութեանը դէմ էր արտայայտուել Ռուսաստանը: ԲՐԻԿՍ կազմակերպութիւնը դիտարկել հակաարեւմտեան հարթակ, ըստ էութեան կը լինի կամ քաղաքական մոլորութիւն, կամ քաղաքական անհամարժէքութիւն:

Այդ կազմակերպութիւնը ուժերի յարաբերակցութեան գլոպալ փոփոխութիւն վերապրող համաշխարհային քաղաքականութեան հարթակներից մէկն է, որտեղ ներգրաւուած երկրները անգամ միմեանց հետ ունենալով ռազմավարական մրցակցային յարաբերութիւններ, այդուհանդերձ դիտարկում են հարթակը որպէս աշխատանքային միջավայր, որտեղ խնդրում են ուժերի գլոպալ պայմանի վերափոխմանն առնչուող տարբեր մօտեցումներ ու տեսակէտներ: Այո, այնտեղ ակտիւ ներգրաւուածութիւն չունի եւրաստլանտեան թեւը, բայց միեւնոյն ժամանակ, արդեօք եւրաստլանտեան թեւում եղած հարթակներին, միջոցառումներին մասնակցութիւնը ենթադրում է

հակառուսականութեան տրամաբանութիւն:

Հայաստանի մասնակցութիւնը պէտք է ենթադրի, եւ թերեւս ենթադրում է պարզապէս նաեւ այդ թեւում տեղի ունեցող պրոցեսների հետ սերտ աշխատանք, գլոպալ վերափոխումների համատեքստում անհրաժեշտ պետական աշխատանքի շրջանակում: Այդ իմաստով, Հայաստանի համար կարեւոր են աշխատանքային բոլոր ուղղութիւնները եւ աւելին՝ Հոկտեմբերին կազանում կայանալիք գագաթնաժողովին Նիկոլ Փաշինեանի մասնակցութիւնը պէտք է թերեւս յագեցուի նաեւ երկրորդ հանդիպումների ընդգրկուն օրակարգով եւ անհրաժեշտ է իրականացնել այդ ուղղութեամբ դիւանագիտական կազմակերպական ակտիւ աշխատանք: Գագաթնաժողովը այդ իմաստով կարող է լինել առիթ Հնդկաստանի, Իրանի, Եգիպտոսի, Չինաստանի, Պրագիլի նախագահների հետ հանդիպումների համար, եւ պէտք է օգտագործել այդ առիթն ու անել առաւելագոյնը, այդպիսի հնարաւորինս շատ հանդիպման համաձայնութեան հասնելու ուղղութեամբ: Ի հարկէ կազանեան գագաթնաժողովին Փաշինեանի մասնակցութեան հիմնական ինտերիզ կը դիտուի այն, թէ արդեօք կը լինեն շփումներ գագաթնաժողովին մասնակցելու մասին յայտարարած Ալիեւի եւ էրտողանի հետ: «ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնէր հոն արտայայտուող բոլոր տեսակետները

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՆԱԹԵՐԹ
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՍԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՅԷ ԱԶԱՊԱՅԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$75.00, \$135.00 (First Class)
Canada \$150.00 (Air Mail)
Overseas \$450.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

Ալէն Սիմոնեան Կը Կարծէ՝ Յայաստանի Եւ Արցախի Միջխորհրդարանական Յանձնաժողովի Չեւաչափը Պէտք Է Չեղարկել

ՀՀ Ազգային ժողովի նախագահ Ալէն Սիմոնեան կը կարծէ, որ Հայաստանի եւ Արցախի միջխորհրդարանական համագործակցութեան յանձնաժողովի ձեւաչափը պէտք է չեղարկել:

«Ես կարծում եմ, որ այդ ձեւաչափը պէտք է լուծարել, քանի որ երկրորդ կողմն ալ իրաւագոր չէ եւ չի ներկայացնում այն, ինչ ժամանակին ներկայացնում էր», - խորհրդարանին մէջ նիստի մեկնարկին յայտնեց Սիմոնեան՝ պատասխանելով ընդդիմադիր «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Արծուիկ Մինասեանի հարցումին, թէ մտադիր է յառաջիկային՝ երկարատեւ ընդմիջումէ յետոյ, այդ յանձնաժողովի նիստ գումարել:

Ալէն Սիմոնեան ըսաւ, որ պէտք է լրջօրէն քննարկել միջխորհրդարանական յանձնաժողովը չեղարկելու հարցը, որովհետեւ «Լեռնային Ղարաբաղի՝ Արցախի պաշտօնեայ այլեւս գոյութիւն չունի, եւ նման կարգավիճակ ՀՀ-ում ալ չի ունի»:

Լրագրողներու հետ ճեպագրութիւն խորհրդարանի ղեկավարը ըսաւ, որ Հայաստանի մէջ գոյութիւն չունի Արցախի նախագահ, Արցախի պատգամաւորները. «Ես համարում եմ, որ օրինակ՝ եթէ վաղը հրաժարականի դիմում ներկայացնեմ, ես հրաժարականի դիմում ալ չեմ ներկայացրել եւ եւ չեմ



ՀՀ Ազգային ժողովի նախագահ Ալէն Սիմոնեան

կարող գալ, ասել՝ գիտէք ինչ, ես ներկայացրել եմ, բայց, այնուամենայնիւ, մնում եմ Աժ նախագահ»:

Ալէն Սիմոնեան նաեւ ըսաւ, որ Երեւանի մէջ Արցախի ներկայացուցչութեան շէնքին իմաստն ալ պէտք է վերանայուի:

«Արցախի նորեկ իշխանութիւնները, որոնք Արցախի իշխանութիւններին ճնշմամբ հեռացրել են, այդ ապագան սկստեղծի վրայ դրեցին, յանձնեցին, նստեցին ուղղաթիւր եւ փախան Հայաստան: Եւ հիմա եկել են, այստեղ Արցախի ներկայացուցչութիւնում հաւաքներ են անում, փորձում են իրենց վրայից այդ մեղքը մաքրեն: Չեն կարողանալու մաքրել»:

Արտակարգ Իրավիճակներու Նախկին Նախարարը Մեղաւոր Գանչցուած Է

ՀՀ արտակարգ իրավիճակներու նախկին նախարար Անդրանիկ Փիլոյեան մեղաւոր ճանչցուած է իրեն առաջադրուած մեղադրանքին մէջ:

«Հայկական ժամանակ»-ին այս մասին տեղեկացուց ԲԴԽ մամուլի խօսնակ Մէրի Գէորգեանը:

Հակափտածութեան դատարանը՝ դատաւոր Տիգրան Դաւթեանի նախագահութեամբ, հրապարակած է այս գործով եզրակացութիւնը, ըստ որուն՝ Անդրանիկ Փիլոյեանը մեղաւոր ճանչցուած է պաշտօնական լիազօրութիւնները չարաչափելու, խարդախութեան եւ կաշառք ստանալու մեղադրանքներով: Անոր նկատմամբ որպէս այլընտրանքային միջոց կիրառուած գրաւի չափը մնացած է անփոփոխ:

Պատիժի հարցին դատարանը պիտի անդրադառնայ յաւելեալ դատաւարներու փոփոխութեան, առաջին նիստը տեղի պիտի ունենայ Սեպտեմբեր 20-ին:

Անդրանիկ Փիլոյեանը ձերբակալուած էր 2022 թուականի Մարտ 30-ին կաշառքի բազմադրուագ գործի մեղադրանքով, իսկ Հոկտեմբեր 7-ին ան 15 միլիոն գրաւի դիմաց ազատ արձակուած էր:

Վերջինիս մեղադրանք առաջադրուած է ՀՀ Քրէական Օրէնս-



ՀՀ արտակարգ իրավիճակներու նախկին նախարար Անդրանիկ Փիլոյեան

գիրքի 311-րդ յօդուածի 3-րդ մասի 3-րդ կէտով /3 դրուագ/ (մեծ չափերով կաշառք ստանալը): Ըստ մեղադրանքին՝ կաշառքի գործով հաստատուած բազմաթիւ պարագաներու ներգրաւուած են արտակարգ իրավիճակներու նախարար Անդրանիկ Փիլոյեանը, վերջինիս խորհրդականը, ինչպէս նաեւ Աի նախարարութեան 10-էն աւելի աշխատակիցներ, այդ շարքին՝ տարբեր ստորաբաժանումներ

Մխիթար Յայրապետեանը Այցելած Է Անօդաչու Համակարգեր Արտադրող Ընկերութիւն

ՀՀ բարձր արհեստագիտական արդիւնաբերութեան նախարար Մխիթար Յայրապետեանը այցելած է հերթական ռազմարդիւնա-

բերական ընկերութիւն, որ կը զբաղի անօդաչու համակարգերու մշակմամբ եւ արտադրութեամբ: Ընկերութեան ղեկավարին ու-

Ձեր Ստորագրած Ամէն Փաստաթուղթ Միտուած Է Անոր, Որ ՀՀ-ն Ստնէ ՌԴ Կամ Միութեանական Կազմի Մէջ. Ալեքսանեանը՝ Ընդդիմութեան

«Յարգելի ընդդիմութիւն, խօսուցից, որ բերել էք Աժ-ի օրակարգ, արդեօք ձեւաւորուել է 22 թուականի Ապրիլի 7-ի շրջաբերական 004-րդ, թէ՛ նոր շրջաբերական էք շրջանառել ու դրա միջոցով էք հիմա խօսուցից ձեւաւորում»:

Ազգային ժողովի նիստին ժամանակ, դիմելով ընդդիմութեան, այս մասին հարցում ուղղեց «Քաղաքացիական Պայմանագիր» խմբակցութեան պատգամաւոր Վահագն Ալեքսանեանը:

«Այն ամէնը, ինչ հիմա դուք խօսում էք, պարոնայք ընդդիմադիրներ, տեղաւորում է հետեւեալ տրամաբանութեան մէջը. ամէն անգամ ինչքան խօսում էք Լեռնային Ղարաբաղից, ինչքան խօսում էք Արցախից, ձեր շրջաբերականի՝ չեմ յիշում՝ որ ենթակէտի 15-րդ ու 16-րդ կէտերն են՝ Ռուսաստանը կարող է Արցախը ենթարկեցնել իրեն, եւ հնարաւոր միութեան դէպքում Արցախի եւ Հայաստանի Հանրապետութեան ճակատագրերը պէտք է լուծուեն որպէս մէկ ամբողջութիւն»:

Ալեքսանեանի խօսքով՝ այստեղ գրուած մէկ ալ կայ՝ ինքնիշխանութեան հնարաւոր գիջման մասին:

«Պարոն Մինասեան, էն, ինչը դուք էք առաջարկել, առաջարկում ու հիմա էլ բերում դաշտ, միտուած է այդ միակ նպատակին, որ Հայաստանը կորցնի իր ինքնիշխանութիւնը, ՀՀ-ն մտնի Ռուսաստանի կամ միութեանական կազմի մէջ, ու այնտեղ հնարաւոր է, մէկ էլ տեսար՝ կպաւ, որ Արցախն էլ ստացուի, կամ չստացուի: Ձեր բոլոր գործողութիւնները, ձեր



Պատգամաւոր Վահագն Ալեքսանեան

խմբակիցների գործողութիւնները, ԼՂ-ում ձեր ստորագրած ամէն մի փաստաթուղթը, ձեր նշանակած նախագահի ստորագրած ամէն մի փաստաթուղթն ուղղուած է եղել մէկ նպատակի՝ Հայաստանը մտցնել ինչ-որ մի բանի կազմի մէջ», - ըսաւ ան, ապա՝ արձագանգեց ընդդիմադիր պատգամաւոր Արթուր Խաչատրեանին:

Ալեքսանեանը Խաչատրեանին յորդորեց դադարեցնել ՀՀ-ի դէմ վկայութիւններ տալը:

«Մի հոգի արդէն նմանատիպ վկայութիւն տուել է՝ Շահրամանեան ազգանունով, դեռ Լեռնային Ղարաբաղում ստորագրելով մի փաստաթուղթ, որում ասուած է, թէ իբր ՀՀ զօրքերը պէտք է դուրս գան ԼՂ-ից: Ձեր այդ խմբակցից հարցրէք՝ բա եթէ ձեր ասածի պէս է, այդ ինչերի՞ տակ է ստորագրել: Նորից եմ ասում՝ դադարէ՛ք ՀՀ-ի դէմ սուտ վկայութիւններ տալ», - եզրափակեց Ալեքսանեան:

Գորիսի Քաղաքապետը Բանտարկութեան Դատապարտուեցաւ 1 Տարի 8 Ամիս Ժամկետով

Գորիսի քաղաքապետը դատարանի այսօրուան որոշմամբ բանտարկուեցաւ մէկ տարի ութ ամիս ժամկետով: Առուշ Առուշանեանը, սակայն, պատիժի կրման վայր պիտի տեղափոխուի որոշումը ուժի մէջ մտնելէ յետոյ: Մինչ այդ անոնք պիտի բողոքարկեն զայն վերաքննիչ ատենան:

Առուշ Առուշանեանը բանտարկելու միջնորդութիւնը Գորիսի ընդհանուր իրաւասութեան դատարան ներկայացուցած էր Փորձաշրջանի ծառայութիւնը՝ պնդելով, թէ Առուշանեանը չի հեռանար քաղաքապետի պաշտօնէն, ապա պէտք է բանտարկուի:

Դատարանը 2022 թուականին Առուշանեանը մեղաւոր ճանչցած էր պաշտօնական լիազօրութիւնները չարաչափելու, ինքնիրաււութեան եւ դիտաւորութեամբ առողջութեան վնաս պատճառելու համար, վճիռը ուժի մէջ մտած էր այս տարուայ Յուլիսին:

Ըստ վճիռին՝ Առուշանեանը հինգ տարի ժամկետով պէտք է չզբաղեցնէր համայնքապետի պաշ-



Գորիսի քաղաքապետ Առուշ Առուշանեան

տօնը: Գորիսի աւագանին, սակայն, վերջերս մերժած էր կատարել դատարանին վճիռը՝ հիմնաւորելով, որ նման լիազօրութիւն չունի: Փորձաշրջանի ծառայութիւնն ալ դիմած էր դատարան՝ խնդրելով հինգ տարիով պաշտօնը թողնելու պատիժը փոխարինել բանտարկութեամբ:


ղեկցութեամբ, նախարարը շրջապէս կատարած է տարածքին մէջ, ծանօթացած է ընկերութեան արտադրանքին եւ ծառայութիւններուն, հեռանկարային ծրագրերուն:

Ներկայացուած արտադրատեսակներն կը ներառէ ԱԹՍ-ներու

եւ բաղկացուցիչ մասերու մշակում, ԱԹՍ-ներու արտադրութիւն եւ սպասարկում, ԱԹՍ ներկառավարական համակարգերու մշակում, ծրագրային ապահովում, մետաղական մասերու, բաղադրեալ նիւթերու մշակում:

ԼՈՒՐԵՐ

Որեւէ Ուժ Զի Կրնար Խզել Իրանի Եւ Զայաստանի Տարածքային Կապը. Ան Քարտուղարը՝ Իրանի Դեսպանին



ՀՀ Անվտանգութեան Խորհուրդի քարտուղար Արմէն Գրիգորեանը Իրանի արտակարգ եւ լիազօր դեսպան Մեհտի Սոպիանիի հետ հանդիպման ընթացքին

«Հայաստան-իրան սահմանը խաղաղութեան ու բարեկամութեան սահման է, եւ որեւէ ուժ չի կարող այն խզել»,- այս մասին, ինչպէս կը յայտնէ Հայաստանի մէջ Իրանի Իսլամական Հանրապետութեան դեսպանատունը, ըսած է ՀՀ Անվտանգութեան Խորհուրդի քարտուղար Արմէն Գրիգորեանը Իրանի արտակարգ եւ լիազօր դեսպան Մեհտի Սոպիանիի հետ հանդիպման ընթացքին:

Ըստ X-ի մէջ կատարուած հրապարակման՝ ան ընդգծած է Իրանի Իսլամական Հանրապետութեան դիրքորոշումը՝ միջազգային սահմաններու անփոփոխելիութեան, որեւէ աշխարհաքաղաքական փոփոխութեան դէմ ըլլալու եւ հարեւաններու տարածքային ամբողջականութեան աջակցելու վերաբերեալ:

Հայաստանի Հանրապետութեան Անվտանգութեան Խորհուրդի քարտուղարը շնորհակալու-

թիւն յայտնած է Հայաստանի տարածքային ամբողջականութեան աջակցելու եւ միջազգային սահմաններու անփոփոխելիութեան մասին Իրանի Իսլամական Հանրապետութեան դիրքորոշման առնչութեամբ:

«Հայաստանի եւ Իրանի սահմանը խաղաղութեան, բարեկամութեան ու խաղաղ համակեցութեան սահման է: Հայաստանը յատուկ կարեւորութիւն է տալիս Իրանի Իսլամական Հանրապետութեան հետ յարաբերութիւններին, եւ որեւէ ուժ չի կարող խզել Իրանի եւ Հայաստանի տարածքային կապը»,- ըսած է ան:

Անվտանգութեան Խորհուրդի քարտուղարը, ընդգծած է, որ Հայաստանի տարածքին որեւէ ապաշրջափակում պիտի ըլլայ Հայաստանի ներքին հիմնարկներուն եւ անոր ազգային ու տարածքային ինքնիշխանութեան վերահսկողութեամբ:

ԵՄ Առաքելութիւնը Զետախուզական Տուեալներ Կը Զաւարթար. ՌԴ Դեսպան Քոփիթին

Հայաստանի մէջ ԵՄ առաքելութիւնը, որ կ'աշխատի հայ-ատրպէյճանական սահմանին, դիտորդութեան անուան տակ կը զբաղի հետախուզական տուեալներու հաւաքագրմամբ՝ հակազդելու Ռուսաստանին, Ատրպէյճանին եւ Իրանին:

Այս մասին յայտնած է Հայաստանի մէջ Ռուսաստանի դեսպան Սերկէյ Քոփիթինը:

«Շատ վտանգներ, որոնց կը բախի Հայաստանը, կարելի էր կասեցնել, եթէ 2022թ. Սեպտեմբերին Երեւանը համաձայնէր իրացնել ՀԱՊԿ գծով միջոցառումներու համալիրը՝ ուղղուած Ատրպէյճանի հետ սահմանին իրավիճակի կայունացման: Խօսքը լուրջ նախաձեռնութիւններու մասին էր, որոնք կը ներառէին ռազմատեխնիկական օգնութիւն, դիտորդական առաքելութեան ուղղորդում, սահմանապահ զօրքերու ուսուցման աջակցութիւն:

Յաւել, ՀՀ ղեկավարութիւնը նախընտրեց ԵՄ առաքելութիւնը հրաւիրել, որ որեւէ կերպ չի պաշտպաներ պետութեան սահմանները, այլ կը զբաղի Ռուսաստանի, Ատրպէյճանի եւ Իրանի դէմ հետախուզական տուեալներ հաւաքագրելով: Հարաւարտ իր Կովկասի ձակաւորները պէտք է որոշեն բացառապէս տարածաշրջանի երկիրները եւ հարեւան գործընկեր պետութիւնները: Դուր-



Հայաստանի մէջ Ռուսաստանի դեսպան Սերկէյ Քոփիթին

սէն ոչ ոք խաղաղութիւն եւ բարգաւաճում կը բերէ մեր ընդհանուր տուն»,- ըսած է Քոփիթինը:


Դեսպանը յաւելած է, որ Ռուսաստանը երբեք չէ հրաժարած Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ բանակցային գործընթացին մէջ «ագնիւ միջնորդի» իր դերէն: Քոփիթինի հաւաստմամբ՝ ձեռք բերուած եռակողմ պայմանաւորուածութիւններուն համահունչ՝ Մոսկուան յաջողութեամբ հարթակ տրամադրած է Խաղաղութեան պայմանագրի նախագիծին շուրջ բանակցութիւններուն համար եւ պատրաստ է ատիկա ընելու ապագային:

Հայաստանն Ու Թուրքիան Կրնան Լուծել Բոլոր Խնդիրները Նոյնիսկ Վաղը. Ռուբինեան

Հայաստանն ու Թուրքիան կրնան լուծել բոլոր խնդիրները եւ լիովին կարգաւորել յարաբերութիւնները նոյնիսկ վաղը, եթէ թրքական իշխանութիւնը քաղաքական կամք դրսեւորէ:

«Երեւանեան Երկխօսութիւն» միջազգային համագումարին ժամանակ այս մասին յայտնած է ՀՀ Ազգային Ժողովի փոխօսնակ, Թուրքիոյ հետ յարաբերութիւններու կարգաւորման հարցերով յատուկ ներկայացուցիչ Ռուբինեան:

«Իրականում, Հայաստանի բոլոր կառավարութիւնները 1991 թուականից՝ մեր երկրի անկախացումից ի վեր, երբեք պատմութիւնը չեն դրել Թուրքիայի հետ բանակցային գործընթացի մէջ, մենք միշտ պատրաստ ենք եղել բացել սահմանները եւ հաստատել դիւանագիտական յարաբերութիւններ, եւ եթէ մեր Թուրք հարեւանները քաղաքական կամք դրսեւորեն, ապա կարող ենք լիովին կարգաւորել յարաբերութիւնները նոյնիսկ վաղը»,- նկատած է ան:



Թուրքիոյ հետ յարաբերութիւններու կարգաւորման հարցերով յատուկ ներկայացուցիչ Ռուբինեան

Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ չկան դիւանագիտական յարաբերութիւններ, 1993 թուականէն Թուրքիան փակած է Հայաստանի հետ ցամաքային սահմանը:

Հայաստանը BRICS-ի Գագաթաժողովին Պիտի Մասնակցի Վարչապետի Մակարդակով

Քաղանի մէջ կայանալիք BRICS- գագաթաժողովին Հայաստանը պիտի մասնակցի վարչապետ Նիկոլ Փաշինեանի մակարդակով, տեղեկութիւնը «Ազատութեան» փոխանցեց վարչապետի մամուլի քարտուղար Նազելի Բաղդասարեանը: Նախօրէին արտաքին գործերու փոխնախարար Մնացական Սաֆարեանը լրագրողներու հետ զրոյցին հաստատած էր Հայաստանի մասնակցութիւնը ինչպէս BRICS-ի գագաթաժողովին, այնպէս ալ ԱՊՀ ոչ-պաշտօնական գագաթաժողովին, սակայն չէր նշած ինչ մակարդակով:

BRICS-ի (Պրագիլ, Ռուսաստան, Հնդկաստան, Չինաստան եւ Հարաւային Աֆրիկէ) ամենամեայ գագաթաժողովը տեղի պիտի ունենայ Հոկտեմբեր 22-24-ին, Քաղանի մէջ:

Գագաթաժողովին պիտի մաս-

նակցի Թուրքիոյ նախագահը: Աւելի վաղ այդ մասին յայտնած էր Ռուսաստանի նախագահի օգնական Եուրի Ուշաքովը: Տեղեկութիւնը հաստատած է թրքական Haberturk հեռուստատալիքը՝ վկայակոչելով Ռեճեպ Էրտողանի աշխատակազմին մէջ իր աղբիւրները:

«Bloomberg»-ը օրերս գրած էր, որ Թուրքիան միաներ առաջ դիմած է BRICS-ին անդամակցելու համար: Անքարան ո՛չ կը հաստատէ, ո՛չ կը հերքէ այդ լուրը: Ռուսաստանի արտաքին գործերու փոխնախարար Սերկէյ Ռյաբկովը հաստատած է, որ Հոկտեմբերին կայանալիք հաւաքին հրաւիրուած է նաեւ Իլհամ Ալիեւը: Պաքուն դեռ չէ հաստատած Ատրպէյճանի նախագահին սպասուող այցը: Ատրպէյճանը BRICS-ին միանալու պաշտօնական յայտ ներկայացուցած է:

Երեւանի Սէջ Տարեկան 1 Տոլար Վարձավճարով Շէնք Տրամադրուած Է Սուրբ Աթոռին

99 տարի ժամկետով Հայաստանի կառավարութիւնը վարձակալութեամբ Սուրբ Աթոռին տրամադրած է Բաղրամեան 12 հասցէին վրայ գտնուող անշարժ գոյքը: Վարձավճարը պիտի կազմէ տարեկան 1 ԱՄՆ տոլար:

«Փոխադարձաբար, Սուրբ Աթոռը ՀՀ ղեկավարութեանն է տրամադրուած վատիկանի Սուրբ Պետրոսի հրապարակին հարող ներկայանալի Կոնչիլիացիոնէ պողոտայի հզ.1 (որտեղ տեղակայուած են միշտ խոշոր երկրների դեսպանութիւններ) հասցէում գտնուող շէնքի տարածքներից մէկը՝ հոգալով դրա վերանորոգման ծախսը», կ'ըսուի կառավարութեան որոշման հիմնաւորման մէջ:

Կը նշուի, որ երկու պետութիւններու դիւանագիտական ներկայացուցչութիւններուն համար



պատշաճ տարածքներու տրամադրումն աւելի պիտի նպաստէ երկկողմ յարաբերութիւններու հետագայ զարգացման ու ամրապնդման:

44-Օրեայ Պատերազմին Հանգամանքները Ուսումնասիրող ՔՆԻԻ 3անձնաժողովին Եզրակացութիւնը Պատրաստ Է Քոչարեան

44-օրեայ պատերազմին հանգամանքներն ուսումնասիրող քննիչ յանձնաժողովին եզրակացութիւնը պատրաստ է, յանձնաժողովը աւարտած է իր աշխատանքը:

Այս մասին Հանրային հեռուստաընկերութեան եթերով յայտարարած է յանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարեանը՝ նշելով, որ Հոկտեմբերին ինք նամակով պիտի դիմէ խորհրդարանի նախագահին՝ դռնփակ նիստ հրահրելու համար, որուն ընթացքին պիտի ներկայացուի յանձնաժողովին գեկոյցը:

Քոչարեանի խօսքով՝ հանրութիւնը պիտի կարենայ ծանօթանալ միայն այդ ելույթի հատուածներուն, այլ ոչ թէ գեկոյցի ամբողջական բնագրին, քանի որ այն գաղտնի տեղեկատուութիւն կը պարունակէ:

Ըստ անոր՝ պատերազմի պատճառներուն մասին լուրջ քննութիւն իրականացուած է, որուն ընթացքին ուսումնասիրուած են տասնեակ հազարաւոր փաստաթուղթեր: Քոչարեանը յաւելած է՝ պարտութեան պատճառները «բազմաբնույթ են ու բազմաշերտ»:

Հարցազրոյցի ժամանակ Քոչարեան ըսաւ, որ քատրային լուրջ փոփոխութիւններու ենթարկուած է պաշտպանական գերատեսչութիւնը:

«Այսօրուայ ընդդիմութիւնն ասում է՝ մեր փառապանծ զօրավարներին հանեցին, տեղը չգիտես՝ ում բերեցին: Տեղը բերեցին հրաշալի կրթութիւն ստացած երիտասարդ զինուորականների, որպէս կանոն՝ գնդապետի ուսադիրներով, որոնք, լինելով երիտասարդ, նաեւ անցած ուղի ունեն, ինչն այսօր նպաստում է մեր բանակի ցանկալի արդիւնքների արձանագրմանը», - նշեց Քոչարեան:

Ըստ Անդրանիկ Քոչարեանի՝



ՔՆԻԻ 3անձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարեան

Ատրպէյճանը աւելի շատ անհանգստացած է ՀՀ յաջողութիւններով, քան մենք կ'ուրախանանք:

«Ատրպէյճանի վերջին յայտարարութիւններն են՝ ՀՀ-ին գրկել որակեալ սպառազինութիւն ունենալու հնարաւորութիւնից, որովհետեւ իրենք էլ տեղեկացուած են, որ Հայաստանը դատարկ տեղը չի նստած: Պաշտպանական գերատեսչութիւնն ամէն օր խնդիրներ է լուծում, որոնք կուտակուել էին նախկինից:

«Մի դրուագ եմ ասում 44-օրեայ պատերազմից, որը մեր անյաջողութեան հիմնական պատճառներից մէկն էր: Հետեւից եկող պատրաստուած պահեստը չկար, թղթի վրայ էր, առաջնագծի էն կառուցները չկային, որոնք որ ունենք, որպէսզի հակառակորդը չկարողանայ ճեղքի: Երբ որ ասում եմ, Սէյրան Օհանեանը վատ է գզում իրեն: Ես մի անգամ ասի՝ դու վատ մի զգայ քեզդ. այդ հնարաւորութիւնը չեն տուել նախկին իշխանութիւնները», - նշեց Քոչարեան:

Ըստ Փորձագետին՝ Ե՛լ Հայաստանը, Ե՛լ Ատրպէյճանը Ձեռք Կը Բերեն Բարձր Մակարդակի Ձեւք-Ձիւնամթերք

Այն, որ Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ ռազմական հաւասարակշռութիւնը այսօր ալ կը շարունակէ խախտուած մնալ, կը փաստեն նաեւ ռազմական փորձագետները:

APRI Armenia-ի մէջ ռազմական վերլուծաբան եւ հետազօտող Լէոնիտ Ներսիսեան կ'ընդգծէ, որ Հայաստանը աշխուժօրէն գնումներու գործընթացը սկսած է 2022-էն յետոյ, այսինքն պատերազմէն երկու տարի անց միայն: Իսկ գէնքի ձեռքբերումն ու անձնակազմի ուսուցումը ժամանակատար է:

«Կարեւոր է նշել, որ Ատրպէյճանը չի ուզում, որ այդ իրավիճակը փոխուի, ու իրենք էլ են աւելի մեծ գումարներ, քան Հայաստանը ծախսում ռազմական գնումների համար: Իրենց ռազմական պիւտճէն գերազանցում է հայկականին: Հայկականը 2024-ին 1,4 միլիարդ տոլարին է մօտ, իսկ Ատրպէյճանինը՝ 3,7 միլիարդ մօտաւորապէս, 2 անգամ աւելի», - ըսաւ Ներսիսեան:

Ռազմական փորձագետը կը

նշէ, որ Ե՛լ Հայաստանը, Ե՛լ Ատրպէյճանը ձեռք կը բերեն բարձր մակարդակի գէնք-գինամթերք՝ մեծամասամբ ՆԱԹՕ-ի չափանիշերուն համապատասխան: Օրինակ՝ «Սեզար» հրետանային համակարգը, որ Հայաստանը կը գնէ Ֆրանսայէն, աւելի բարձր որակի է, քան այն, ինչ ձեռք կը բերէ Ատրպէյճանը Սերպիայէն եւ Սլովակիայէն: Բայց փոխարէնը Պաքուի կողմէ ձեռք բերուած մօտ մէկ միլիարդ տոլարի արժողութեամբ իսրայէլեան հակաօդային պաշտպանութեան «BARAK MX» համակարգերը աւելի բարձր արհեստագիտական մակարդակ ունին, քան «AKASH»-ները, որ Հայաստանը ձեռք կը բերէ Հնդկաստանէն:

Որքա՞ն ժամանակ դեռ անհրաժեշտ է, որպէսզի Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ խախտուած ռազմական հաւասարակշռութիւնը վերականգնուի: APRI Armenia-ի ռազմական փորձագետ Լէոնիտ Ներսիսեանի համոզմամբ՝ որոշ փոփոխութիւններ տեսանելի պիտի ըլլան 3-էն 4 տարի անց միայն:

Ծերակուտական Պեն Քարտին COP29-էն Առաջ Պաքուին Կոչ Կ'ընէ Արձակելու Հայ Գերիները

Ատրպէյճանի մէջ Նոյեմբերին կայանալիք ՄԱԿ-ի Կլիմայի հարցերով դադարաւորողութիւն (COP29) ընդառաջ՝ ԱՄՆ Ծերակուտական Յարաբերութիւններու յանձնաժողովի նախագահ Պեն Քարտին յայտարարութեամբ հանդէս եկած է, ուր Ատրպէյճանին կոչ կ'ընէ որոշակի գիշումներու երթալու:

«COP29-ի նման մեծ միջազգային համաժողովի հիւրընկալումը պէտք է ուղեկցուի պատասխանատուութեամբ եւ ակնկալիքով, որ ընդունող երկիրները թոյլ կուտան տեղեկատուութեան եւ հարցերու անկեղծ քննարկում, ինչ որ կը պահանջէ խօսքի եւ հաւաքներու ազատութեան ճանաչում: Ատրպէյճանը ատիկա չէ ըրած», - ըսուած է յայտարարութեան մէջ:

«Եթէ Ատրպէյճանը կը ձգտի կայուն շարաբերութիւններ հաստատելու եւրատլանտեան համայնքին հետ, ես կոչ կ'ընեմ նախագահ Ալիեւին ազատ արձակելու իր կառավարութեան կողմէ անարդարացիօրէն բանարկուածները, այդ շարքին՝ հայ կալանաւորները եւ բնապահպանները, որոնք Չովտարի ոսկրի հանքավայրի շահագործման վատ աշխատանքային փորձի եւ շրջակայ միջա-



ԱՄՆ Ծերակուտական Յարաբերութիւններու յանձնաժողովի նախագահ Պեն Քարտին

վայրի վրայ վնասակար ազդեցութիւններու դէմ խաղող ցոյցեր իրականացուցած են», - յայտնած է ԱՄՆ ծերակուտականը՝ շարունակելով. «Նոյեմբերին կայանալիք COP29-ին ընդառաջ ես Ատրպէյճանի կառավարութեան կոչ կ'ընեմ ցոյց տալու իր նուիրուածութիւնը մարդու իրաւունքներու պաշտպանութեան՝ այդ անձերը անյապաղ ազատ արձակելով»:

Պաքուն Մեկնաբանած Է Ֆրանսայի Քաղաքացիներուն Ատրպէյճան Մեկնելու Հետ Կապուած Նախազուշացումը

Ատրպէյճանի ԱԳՆ մամուլի ծառայութեան ղեկավար Ալլան Հաճիբախտէն մեկնաբանած է ֆրանսայի ԱԳՆ-ի նախազուշացումը՝ կապուած Ատրպէյճան մեկնելու հետ:

«Մենք խստօրէն կը դատապարտենք Ֆրանսայի Եւրոպայի եւ Արտաքին գործերու նախարարութեան նախազուշացումը Ատրպէյճան մեկնելու վերաբերեալ, որ կը վերաբերի ՀՀ-ի անարդարութեան պնդումներուն, թէ իբր Ատրպէյճանի մէջ Ֆրանսայի քաղաքացիներ կը ձերբակալուին եւ կը հետապնդուին: Ֆրանսայի նման անհիմն եւ կողմնակալ որոշումն ու յայտարարութիւնը կը վկայէ Ատրպէյճանի հետ շարաբերութիւնները ալ աւելի սրելու այս երկրին մտադրութեան մասին», - ըսած է Հաճիբախտէն:

Ըստ անոր՝ Ֆրանսայի, Եւրոպայի եւ Արտաքին գործերու նախարարութեան այն պնդումները,

որ Ֆրանսայի քաղաքացիները կը ձերբակալուին առանց պատճառի, որեւէ հիմք չունին, ատիկա իրականութեան խեղաթիւրում է:

«Ատրպէյճանի մէջ անցեալ տարուայ Դեկտեմբեր 4-ին լրտեսութեան կասկածներով ձերբակալուած է միայն Ֆրանսայի քաղաքացի Մարթին Ռայանը: Բացի անկէ, յայտնի է, որ Պաքուի մեթրոյին մէջ իր գործողութիւններուն համար բերման ենթարկուած է Ֆրանսայի մէկ այլ քաղաքացի՝ Թէօ Հիւկօն: Ընդհակառակը, ակնյայտ է, որ Ֆրանսայի կողմէ ատրպէյճանցի լրագրողներու՝ Ֆրանսա եւ Նոյնիսկ Շէնկէնեան գօտիի այլ երկիրներ մեկնելու խոչընդոտները լիովին կը հակասեն «մարդու իրաւունքներուն», որ Ֆրանսան կը քարոզէ:

Եւս մէկ անգամ կը պահանջենք դադարեցնել Ֆրանսայի կողմէ Ատրպէյճանի դէմ զրպարտչական արշաւը», - նշած է ան:

Պաքուի Մեջ Աւարտած Է ԼՂ Նախկին Ռազմաքաղական Ղեկավարներուն Դէմ Շինծու Քրեական Գործին Նախաքննութիւնը

Ատրպէյճանի մէջ Լեւոնային Ղարաբաղի նախկին ռազմաքաղաքական ղեկավարներուն նկատմամբ յարուցուած շինծու քրեական գործին նախաքննութիւնը աւարտած է, նիւթերը յառաջիկային պիտի ներկայացուին դատարան:

NEWSq.am-ի հետ զրոյցին, Ատրպէյճանի գլխաւոր դատախազ Քյամրան Ալիեւ յայտնած է, որ հիմա քրեական գործին նախաքննութիւնը աւարտած է, այս պահին գործի նիւթերուն «կը ծանօթանան ինչպէս մեղադրեալ-

ները, այնպէս ալ տուժածները»:

«Այս բոլոր քննչական միջոցառումները իրականացնել յետոյ գործը պիտի ուղարկուի դատարան՝ ըստ էութեան քննութեան՝ միջազգային չափանիշերուն եւ Ատրպէյճանի քրեական իրաւունքին համապատասխան», - ըսած է Ալիեւ:

Ատրպէյճանը կը հաստատէ իր մօտ 23 հայ գերիի առկայութիւնը: Պաքուի մէջ ապօրինի պահուող անձերու շարքին են նաեւ Լեւոնային Ղարաբաղի նախկին ռազմաքաղաքական ղեկավարները:

Քաղաքական Նշմար Երտողան Եւ Բանակը Դէմ Դիմաց



Բարունակ.- Սամուէլ, քովդ ի՞նչ նորութիւն կայ:
Սամուէլ.- Բարօ, անցեալ շաբաթ Թուրքիոյ մէջ շատ հետաքրքրական դէպքի մը ականատես եղայ, որուն քաղաքական իմաստին կ'ուզեմ անդրադառնալ:
30 Օգոստոսին տեղի ունեցաւ Թուրքիոյ պաշտպանութեան ազգային ռազմական ակադեմիայի շրջանաւարտ մօտ 960 լէյթենանթներու վկայականներու բաշխման եւ դրօշի յանձնման արարողութիւնը, որուն անձամբ ներկայ էր Թուրքիոյ նախագահ Ռեճեպ Էրտողանը: Արարողութեան ակադեմիայի յանձնարարական խումբէն, կին սպայի մը գլխաւորութեամբ, անջատուելով ընդհանուր խումբէն, իրենց սուրերը վեր բարձրացուցած սկսան վանկարկել «Աթաթուրքին զինուորներն ենք» կարգախօսը:

Ընթացակարգէն դուրս տեղի ունեցած այս արտառոց դէպքին մասին բանավէճը դեռ կը շարունակուի փորձագետներու շրջանակներէն ներս: Ուշադրութիւն հրաւիրելով կարգապահութեան բացակայութեան վրայ, զինուորական եւ իրաւական փորձագետներ նշեցին, որ այս գործողութիւնը կազմակերպուած եւ ուղղուած էր իրենց վկայականները յանձնող նախագահին եւ անոր ղեկավարած կրօնամէտ Արդարութիւն եւ Զարգացում Կուսակցութեան (ԱԿՔ) դէմ:

Ըստ անվտանգութեան եւ ռազմավարական հարցերու մասնագէտ, թոշակի անցած գնդապետ Իպրահիմ Քելեշի, ակադեմիայի արարողութեան ժամանակ ոչ կանոնակարգային «սուրի երգումը» անկարգապահութիւն է, մատնանշելով նաեւ, որ արձակուած կարգախօսները կուսակցութեան մը կարգախօսներն են:

Իմ կարծիքովս, Քելեշի ակնարկած կուսակցութիւնը Քեմալական ընդդիմադիր Ժողովրդահանրապետական կուսակցութիւնը (ՇՊԿ) է, որ այս տարուայ Մարտին տեղի ունեցած տեղական ինքնակառավարման ընտրութիւններուն մեծ յաղթանակ տարաւ ամբողջ Թուրքիոյ տարածքին:

Զինուորականներու այս ցուցադրական «մարտահրաւերի» երեւոյթը Էրտողանի կուսակցութեան տկարացումի նշան է: Իսկ կին սպային ներկայութիւնը, շրջապատուած իր ընկերներով եւ անոր բացայայտ առաջնորդի դեր առնելը, պատասխան է Էրտողանի կուսակցութեան կանանց հանդէպ խտրականութեան քաղաքականութեան:

Իսկ ընդհանուր պատկերին մէջ, Թուրքիա զինուորական յեղաշրջումներու պատմութեան մեծ հռչակ ունի: Ճիշդ է, որ բանակը օրէնքով ապաքաղաքականացուած է եւ զինուորականներուն չի թոյլատրուիր քաղաքականութեամբ զբաղիլ, բայց պատմութիւնը ցոյց կու տայ, որ 1923 թուականին Թուրքիոյ ժամանակակից պետութեան հիմնադրումէն ի վեր, Թուրքիոյ զինուած ուժերը կազմակերպած են երեք ռազմական յեղաշրջում (1960, 1971 եւ 1980 թուականներուն) եւ տարբեր միջամտութիւններ ըրած են երկրի քաղաքական կեանքին մէջ: Ասոնցմէ յատկանշական է 28 Փետրուար 1997-ին բանակին հրապարակած յուշագիրը եւ անոր յաջորդած գործողութիւնները, օրինակ՝ կրօնական հաստատութիւններու, իմամներու եւ քարոզիչներու դպրոցներու փակումը եւ համալսարաններուն մէջ հիճապի արգելումը:

ՄԱՍԻՍԷ ԴԱԶԱՐԵԱՍ

Հայաստանը Եւ Եւրոպական Միութիւնը

Շարունակուած էջ 1-էն

Երկխօսութիւնը Հայաստան-ԵՄ յարաբերութիւններու աւելի լայն շրջանակի մէջ մասն է, որ զգալի յառաջընթաց արձանագրած է 2017 թուականին Հայաստան-ԵՄ Համապարփակ եւ ընդլայնուած գործընկերութեան համաձայնագրի (ՀԸԳՀ) ստորագրումէն ի վեր: Երկխօսութեան շրջանակներուն մէջ գործադրուող շա-

րունակական ջանքերը պիտի աջակցին Հայաստանի մէջ իրականացուող բարեփոխումներու համապարփակ օրակարգին, մասնաւորապէս՝ այն ոլորտներուն մէջ, որոնք առանցքային են ԵՄ երկիրներ առանց մոտաւոր արտօնագրերու ճամբորդելու համար, ինչպիսիք են՝ փաստաթուղթերու անվտանգութիւնը, սահմաններու եւ գաղթի կառավարումը, փառածութեան եւ կազմակերպ-

Ճաքեր Ռուսաստան-Իրան Յարաբերութիւններուն

Շարունակուած էջ 1-էն

հով: Ամէն անգամ երբ Պաքու կը բարձրացնէր այս հարցը, Իրան կը յայտարարէր, որ իրենք դէմ են տարածաշրջանի երկիրներու սահմաններու որեւէ տեսակի փոփոխութեան: Իսկ երբ վերջերս Պաքուն յայտարարեց, որ առայժմ հրաժարած է միջանցքի իր պահանջէն կը կարծուէր թէ, այդ էջը փակուած է:

Իրանի համար անակնկալ եղաւ Մոսկուայի դիրքորոշումը, որ արտայայտուեցաւ Լաւրովի բերնով ու հակազդեցութիւնը եղաւ արագ ու հրապարակային: Նախ Ռուսաստանի դեսպանը հրաւիրուեցաւ Արտաքին գործոց նախարարութիւն՝ բողոքելու համար Մոսկուայի դիրքորոշումին կապակցութեամբ: Այս եղան բազմաթիւ յայտարարութիւններ ըսելու համար, որ Թեհրանը դէմ է, որ Սիւնիքի մէջ հաղորդակցութիւնները վերահսկեն երրորդ երկիրներու ներկայացուցիչները: Աւելին, Իրանի անվտանգութեան կառոյցներուն մօտ կանգնած լրատուամիջոց նկատուող «Թեհրան Թայմզ» թերթը եկաւ յայտնելու, որ Պաքուի եւ Անգարայի պահանջ-

ջած «զանգեզուրեան միջանցքը» կարմիր գիծ է Թեհրանի համար ու Իրանի իշխանութիւնները պատրաստ են ընդդիմանալու սահմանները փոխելու փորձերուն՝ մոյ-նիսկ ռազմական միջամտութեամբ:

Ինչպէս յայտնի է, Իրանի համար խիստ կարեւոր է Հայաստանի հետ սահմանը, որպէսզի իրանեան բեռնատարները կարողանան Վրաստանով հասնիլ Սեւ Ծով եւ ապա Եւրոպա: Թեհրան նաեւ ունի այն մտավախութիւնը, որ եթէ Մոսկուան փորձէ միջանցքի պատրուակով վերադառնալ Հարաւային Կովկաս, Արեւմուտքը կրնայ յայտնուիլ իր սահմանին՝ արգիլելու համար մնացած զարգացումները:

Այս բարդ իրավիճակին առջեւ Ռուսաստանը պիտի ստիպուի նահանջելու՝ աւելի չսրելու համար Իրանի հետ իր յարաբերութիւնները, որոնք խիստ կարեւոր են Մոսկուայի համար յատկապէս այս հանգրուանին: Իսկ Հայաստան-Իրան շահերու համընկնումը նպաստաւոր է երկու կողմերուն համար ալ:

ԳՐԻԳՈՐ ՆՈՏՆԵԱՆ
«ՄԱՍԻՍ»

Նոյեմբերի 9-ի Յայտարարութեան Մէջ

Շարունակուած էջ 1-էն

Ատրպէյճանի միջեւ մեքենաների ճանապարհի ու երկաթուղային կապի հաստատումը Հայաստանի տարածքով: Մենք պատրաստ ենք նման հաղորդակցութիւն տրամադրել: Բայց պէտք է նաեւ արձանագրենք, որ Նախիջեւանը զրկուած է ճանապարհային կապից, որովհետեւ ե՛ւ Իրանի տարածքով ե՛ւ Թուրքիայի տարածքով Նախիջեւանը հնարաւորութիւն ունի կապ հաստատել Ատրպէյճանի հետ», - ըսաւ ան:

Փաշինեան ընդգծեց, որ Հայաստանը պատրաստ է որեւէ պահի ձեռնամուխ ըլլալու «Խաղաղութեան խաչմերուկ» նախագիծի իրականացման:

«Պատրաստ ենք՝ ներառեալ Ատրպէյճանի ու Նախիջեւանի միջեւ կապի ապահովմանը: Այս գործընթացին խանգարում է այն, որ մեր ոչ բոլոր գործընկերներն են պատրաստ հակուած օգտուել մեր կողմից առաջարկուող հնարաւորութիւնից: Քննարկուած է այն, թէ

ինչքանով է «Խաղաղութեան խաչմերուկը» տեղաւորուած Նոյեմբերի 9-ի եռակողմ յայտարարութեան տրամաբանութեան մէջ: Փորձ է արուած ներկայացնել, թէ եռակողմ յայտարարութիւնը ենթադրում է, որ այս հաղորդակցութիւնների անվտանգութիւնը ՀՀ-ում պէտք է ապահովեն երրորդ ուժեր, դա կապ չունի իրականութեան հետ», - ըսաւ Փաշինեան:

Վարչապետը մէջբերեց Նոյեմբերի 9-ի յայտարարութեան 9-րդ կէտը, ըստ որուն՝ ՀՀ-ն կ'երաշխաւորէ Ատրպէյճանի արեւմտեան շրջաններու եւ Նախիջեւանի միջեւ ճանապարհային հաղորդակցութեան անվտանգութիւնը՝ քաղաքացիներու, փոխադրամիջոցներու եւ բեռներու՝ երկու ուղղութիւններով անխոչընդոտ տեղաշարժը կազմակերպելու նպատակով:

«Նոյեմբերի 9-ի յայտարարութեան մէջ չկայ այնպիսի դրոյթ, որով ՀՀ որեւէ տարածքի վրայ պէտք է լինի այլ երկրի վերահսկողութիւն», - ըսաւ Նիկոլ Փաշինեան:

ուած յանցաւորութեան դէմ պայքարը, ինչպէս նաեւ հիմնարար իրաւունքներու պաշտպանութիւնը:

Երկխօսութեան մեկնարկին համար հիմք հանդիսացած է «Հայաստանի Հանրապետութեան եւ Եւրոպական Միութեան միջեւ մոտաւոր արտօնագրերու տրամադրումը դիւրացնելու մասին», ինչպէս նաեւ «Հայաստանի Հանրապետութեան եւ Եւրոպական

Միութեան միջեւ առանց թոյլտուութեան բնակող անձերու յետընդունման մասին» համաձայնագրերու յաջող իրականացումը, որուն շնորհիւ 2014 թուականի Յունուար 1-էն ճամբորդութեան ընթացակարգերը պարզեցուած են բազմաթիւ հայ քաղաքացիներու համար: Ներկայիս ԵՄ բոլոր քաղաքացիները ազատուած են Հայաստան մուտքի արտօնագրի պահանջէն:

Ձեր Ծանուցումները Վստահեցեք
«Մասիս» Շաբաթաթերթին
Massis2@earthlink.net (626) 797-7680

Երաժշտական Ինքնատիպ Երեկոյ Նուիրուած Զամբարձում Պերպերեանի



Հակառակ Գալիֆոնիոյ այս տարուան ամառնային արտակարգ սոթ օդին, հարիւրաւոր մշակութասէրներ, Ուրբաթ Սեպտեմբեր 8-ին, 2024, փութացած էին Կլենտէյլի Իրանահայ Միութեան հանդիսարանը, ներկայ գտնուելու Թէքէեան Մշակութային Միութեան 55-ամեակին առթիւ կազմակերպուած երաժշտական երեկոյթին, նուիրուած հանրայայտ երգահան, խմբավար եւ մանկավարժ Համբարձում Պերպերեանին:

Արդարեւ, Թէքէեան Մշակութային Միութեան մեծագոյն Լոս Անձելոսի վարչութեան կազմակերպած սոյն միջոցառումը՝ համազարգացիկ բնոյթ ունէր: Հանդիսութեան ներկայ էին օրուան հովանաւոր՝ Թեմիս Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, Լոս Անձելոսի մօտ Հայաստանի գլխաւոր հիւպատոս՝ Դոկտ. Կարէն Իսրայէլեան, ինչպէս նաեւ մշակու-

թային, քաղաքական եւ կրօնական տարբեր կազմակերպութեանց ներկայացուցիչներ ու Համբարձում Պերպերեանի նախկին աշակերտները:

Իր բացման խօսքին մէջ կազմակերպիչ յանձնախումբին անունով, օրուան հանմղիսավարներէն՝ Յասմիկ Գարայեան՝ արտանց ողջունեց յարգարժան հիւրերու եւ զեղարուեստասէր հասարակութեան ներկայութիւնը, միասնաբար նշելու սոյն յիշարժան նախաձեռնութիւնը:

Այս առթիւ սրտի խօսքով ելոյթ ունեցաւ Լոս Անձելոսի մօտ Հայաստանի աւագ հիւպատոս Դոկտ. Կարէն Իսրայէլեան: Ան սրտանց շնորհաւորեց Թէքէեան Մշակութային Միութեան հիմնադրութեան 55-րդ տարեդարձը եւ Լոս Անձելոսի մասնաճիւղին կազմակերպած զեղեցիկ նախաձեռնութիւնը, նուիրուած վաստակաշատ արուեստագ-

գէտ, երաժիշտ, մանկավարժ ու խմբավար Համբարձում Պերպերեանի յիշատակին:

Դժուար չէ հասկանալ, որ բանաստեղծուհու սէրը հիմնականում անպատասխան սէր է: Որքան էլ մերժուած, նա պարտաւոր է յորդոր, պատգամ թողնել մարդկանց.

Ե՛հ, ի՞նչ արած, բախտը խռով Թող աշխարհում մեզ չի՛շի, Միայն ապրենք մենք սիրելով՝ Թեկուզ ես՝քեզ, դու՛ ուրիշի

Ահա թէ ինչպէս է գնահատել Կապուտիկեանի Միերեգութիւնը հրաշալի բանաստեղծ Վահագն Դաւթեանը.

«Սիլվա Կապուտիկեանից առաջ Հայ պոէզիայում հոգեբանական խորութեամբ ու այդպիսի ուժով, ոչ ոք չի բացել սիրող, երազող սիրուց երջանկացող ու տառապող կնոջ հոգին ...

Անշուշտ, միայն «Մասիսացաւով» տառապող Շիրազը հագիւ թէ երիտասարդ տարիքում կարողանար հասկանալ, թէ ինչպէս իր համար կեանքի ընկեր ընտրած Սիլվա Կապուտիկեանը ի գորու է բանաստեղծութեան Մասիսը ելնել ու այնտեղից, Վանից մինչեւ Երեւան գովերգել հայ մարդուն, հայ գիրը, հայ լեզուն, հայ քնարերգութիւնն ու այդ ամէնը ամբողջացնող Մայր Հայաստանը:

Անձնական սիրոյ հանդէպ կարծես անտարբեր բանաստեղծուհին ահա թէ ինչ նոր գոյնով, նորովի ընկալումով է բարձրացնում մարդկային այդ անմեղ զգացումը.

Ո՛ւր էլ գնաս, ես քեզ հետ եմ, ես կը գամ

Ո՛չ, չե՛ս կարող, ինձ չե՛ս կարող մոռանալ:

Ժամանակին, Աստուծոյ բարի,

թէ չար կամոք, համատեղ կեանքը չստացուեց նրանց միջեւ: Գուցէ բարին դա էր, որովհետեւ հակառակը լինելու պարագային, հագիւ թէ մենք ունենայինք կողքիդ քի երկու հանձարեղ բանաստեղծներ:

Սիլվա Կապուտիկեանի արձակ գործերի մէջ առանձնանում են ճանապարհորդութիւնների ընթացքում գրի առած այն գործերը, որոնց մէջ արծարծուում են սփիւռքահայ մարդու հոգներն ու հայրենի երկրի կարօտից օրէօր հիւծուող, բզկտուող հոգին:

Սիլվա Կապուտիկեանը փառահեղ ՏՐԻԲՈՒՆ էր (աշխատաւոր ժողովրդի շահերի պաշտպան), հեւտոր: Ժամանակին՝ 1960-70ական թ.թ. նա եղել աշխարհ բոլոր հայ համայնքներում ու իր բոցաշունչ հայրենասիրական ճառերով ջերմացրել տասնեակ հազարաւոր հայերի կարոտակեզ հոգիները:

Սիլվա Կապուտիկեանը Հայ քնարերգութեան թագուհին, իսկ առօրեալ կեանքում՝ պատկառանք առաջացնող ՄԵՄ ՏԻԿԻՆ:

Սիլվա Կապուտիկեանը միայն 15 տարի ապրեց Անկախ Հայաստանում: Տեսաւ Ղարաբաղեան պատերազմ, 32 քաղաքական գործիչների եւ մտաւորականների խորհրդաւոր սպանութիւններ, Հայաստանի կառավարութեան գլխատում,՝ Հոկտեմբերի 27: Վերջինը՝ իր մահից երկու տարի առաջ՝ 2004ին, Ապրիլեան դէպքերը՝ Երեւանի Բարեկամութեան պողոտայի վրայ, երբ իշխանական բռնի ուժերը ցրեցին խաղաղ ցոյցի մասնակիցներին: Այդ միջադեպի առնչութեամբ, որպէս բողոքի նշան, անուանի բանաստեղծուհին, քաղաքական գործիչ, անկուռն հայրենասէր Սիլվա Կապուտիկեանը սպանիչ նամակի հետ միասին օրուայ վերջապէս իր վերադարձըց իրեն շնորհուած «Սուրբ Մահակ, Սուրբ Մաշտոց» շքանշանը:

Լաւ է, որ Սիլվա Կապուտիկեանը չտեսաւ 2020 թ. 44օրեայ Արցախեան պատերազմը, որն աւարտուեց Հայաստանի պարտութեամբ: Ամէնահասաւորը՝ 2024 թ. Արցախի հայաթափումն ու երկիրը ափսէի վրայ Ազերիին յանձնելը:

Իմ վերջին՝ չակերտաւոր հանդիպումը ՄԵՄ ՏԻԿԻՆՈՋ հետ կայացաւ նրա մահուան օրը՝ 2006 թուականի Օգոստոսի 25ի վաղ առաւոտեան, երբ 30 տարուայ իմ ընկեր, Բանասիրական Գիտութիւնների Դոկտոր Սուրէն Դանիէլեանի հետ այցելեցինք հանգոցեալ Սիլվա Կապուտիկեանի բնակարանը՝ մեր ցաւակցութիւնը յայտնելու նրա բարեկամներին եւ միակ հարազատին, քանդակագործ Արա Շիրազին: Վերջինս ինձ տեսնելով, փորձեց դադարի մօտից հեռանալ ու մոտենալ ինձ՝ ես կանխեցի եւ ինքս մոտեցայ նրան ու մենք խոնաւ աչքերով գրկուեցինք, նա միայն հագիւ կարողացաւ շշնջալ, Դուք այստե՞ղ Մաստոր...:

Ուզում ենք հաւատալ, որ Սիլվա Կապուտիկեանի Քարաւաններն այսուհետեւ կը քայլեն հետագարձ քայլքով՝ հանգրուանելու համար Արարատի փէշերին՝ ուր նրանք կը հիւսեն իրենց նոր բոցնը:

Դո՛ւ, իմ ժողովուրդ, դու ապրել ե՛ս, կա՛ս,

Այսպէ՛ս՝ ապրելով...

Սեւակեան շնչով գրուած այս երկու տողը բաւարար է Սիլվա Կապուտիկեանի անմեղնելի հայրենասիրութիւնն ու հայասիրութիւնը բնորոշելու համար:

Սեւակեան շնչով գրուած այս երկու տողը բաւարար է Սիլվա Կապուտիկեանի անմեղնելի հայրենասիրութիւնն ու հայասիրութիւնը բնորոշելու համար:

«Որպեսզի Արմատները Պահենք»



ՊՈԿՏ. ԳՐԱՅԻՐ ԸՆՊԵՏԵԱՆ

Հայտուն պատմությունը տարածում է քիչ մը ամեն տեղ: Այս տարածումը վիճակին մէջ հայր կերտած է մշակութիւնը և քաղաքակրթութիւնը: Այս ակներե է, երբ կը հանդիպիս հայկական իրականութիւններու, որոնք ունին երկար ժամանակներու վրայ տեւած պատմութիւն: Այս պատմութեան մէկ խօսուել իրականութիւնը կրետէի (Յունաստան) հայերն են:

Կրետէ, 21-26 Օգոստոս 2024:
Կրետէ կղզին կը գտնուի Միջերկրական ծովուն արեւելեան կողմը եւ Եգէական ծովուն հարաւը: Հայերու ներկայութիւնը կրետէի մէջ աւելի քան հազար տարուան պատմութիւն ունի: 11-րդ դարէն սկսեալ արդէն հայեր ապրած են Հերակլիոնի մէջ: Այս փոքրաթիւ հայկական գաղութը չբաւարարուեցաւ միայն անձնակազմի կենսական կառուցելով, այլ նաեւ տեսաւ հաւաքական կենսաբան կարեւորութիւնը: Այս հաւաքական կենսաբան աշխարհուն մէկ լաւագոյն խօսուել եւ ապրող իրականութիւնը Ս. Յովհաննու Կարապետ եկեղեցին է, որ հիմնուած է 1669 թուականին, եւ որ մինչեւ այսօր տակաւին կը վկայէ:

Եւ վկայութիւնը:
Եզնիկ արք. Պետրոսեան լծուած է տեսնալին աշխատանքի՝ վերակազմակերպելու եւ վերաշխուժացնելու եկեղեցին եւ համայնքը, երբեք մօտաւորապէս հազար հայորդիներով: Եթէ անոնց մեծ մասը կ'ապրի Հերակլիոն, բայց նաեւ տարածուած են կղզիին այլ քաղաքներուն մէջ: «Գաղութին մէջ ունինք հայեր, որոնք իրենք են, բայց կան նաեւ Հայաստանէն հաստատուած հայորդիներ», ըսաւ սրբազան հայրը: «Ինծի համար բոլորն ալ հայ են, եւ ես իրենց հայրն եմ: Երբեք թոյլ պիտի չտամ, որ տարբերութիւններ դրուին իրարու միջեւ», վստահեցուց սրբազանը:

Եզնիկ սրբազանին հետ զրուցեցինք գաղութի հայապահպանման գործընթացին մասին: Սրբազանը լաւատես է, ինչ որ ուժ եւ նոր տեսիլք կը սրսկէ գաղութի կազմակերպչական աշխատանքներուն մէջ: «Մեր ժողովուրդին գաւակները կը հաւատան, որ եթէ եկեղեցիին կողքին են, ուրեմն հայ են», ըսաւ ան:

Կրետէի մէջ ազգային ուրիշ կառույց չկայ՝ բացի հայկական եկեղեցիէն: Տարիներ շարունակ Հայ եկեղեցիին ունեցած պատմական ներկայութիւնը եւ անոր անհրաժեշտութիւնը դարձեալ կը

շեշտուի՝ այս անգամ կրետէի մէջ: Հայ եկեղեցին հայուն հոգեւոր եւ ազգային ինքնութեան պահպանման կարեւոր հիմքն է: Իսկ կրետէի համար միակն է:

Աննա Թանթուշեան ծնած է Լոռի, Հայաստան: 1998 թուականին եկած է Կրետէ: Աննան ունի երկու զաւակներ: Եթէ 26 տարի է ի վեր ան ձգած է իր հայրենի տունը, բայց իր սրտին մէջ ամուր կը սեղմէ Հայաստանի կարօտը: «Պանդխտութեան ճանապարհով եկայ Կրետէ», ըսաւ Աննա: - Հայրենիքի մէջ ստեղծուած դժուար օրերու պայմանները ստիպեցին, որ ձգեմ իմ տունս եւ հողս»:

Աննայի համար կան երեք սրբութիւններ՝ հաւատքը, լեզուն եւ հայրենասիրութիւնը: «Անհրաժեշտ է, որ արմատները պահենք», ըսաւ Աննա: Ան իր գաւակները հայ մեծցուցած է եւ շաբաթ օրերը իր տան մէջ հայ մանուկներուն համար կը կազմակերպէ հայերէնի դասընթաց՝ անվճար: Աննան կը հաւատայ, որ «արմատները պէտք է պահել»: Ան հաւատքէն անցած է գործնական աշխատանքի եւ կ'ուզէ, որ հայ մանուկները կրետէի մէջ նոյնպէս պահեն իրենց արմատները:

Ժիրայր Պալըզեան եկեղեցիին սարկաւազն է: Ան 97 տարեկան է: Ամէն կիրակի իր ամբողջ ուժով իր պարտականութիւնը կը կատարէ մեծ սիրով եւ նուիրուածութեամբ: «Ինչ տարեկանին եկեղեցի մտայ եւ մինչեւ այսօր տակաւին հոս եմ: Հիմա 97 տարեկան եմ», ըսաւ Ժիրայրը: - Արմատներս հայկական են: Արմատները որքան որ ջրես, այդքան կը մեծնան»: Ժիրայրին դէմքին վրայ եթէ մէկ կողմէ կար ժպիտ, բայց կար նաեւ հաւատք, որ ինծի հետ բաժնեց այդ օր:

Սանդի Աւետիսեանը եկեղեցիին Թաղական խորհուրդի գանձապահն է: Աշխուժ ներկայութիւն է գաղութին մէջ: Սանդիի հօրենական մեծ ծնողքը եկած են Չմիւռնիայէն՝ Յեղասպանութենէն առաջ: Անոնք հիմնած են իրենց սեփական կոշիկի վաճառատունը՝ 1900 թուականին: Իրենց երկար տարիներու նուիրական աշխատանքին համար Աւետիսեանները պարգևատրուած են պետական մրցանակով:

«Մեծ հարստութիւն է հայ ըլլալը», ըսաւ Սանդի: - Բայց նոյնքան պարտաւորութիւն է հայ ըլլալը, որովհետեւ կ'ապրինք Յունաստան եւ պէտք է հաւասարակշռենք մեր յունական եւ հայկական իրականութիւնները»: Սանդիին

ամուսինը յոյն է: Բայց իր տղայ գաւակին անունը դրած է Յովհաննէս: Այս Սանդիին հարստութիւնն է, որ կը կրիսէ հայուն եւ յոյնին հետ: «Հայերէնը տունը եւ եկեղեցիին մէջ սորվեցայ», ըսաւ Սանդի: - Եկեղեցին մեր տունը, դպրոցը եւ մեր ինքնութիւնն է: Երբ եկեղեցիին դռները բաց են, ժողովուրդը կը խանդավառուի»:

«Հայկական դպրոց չեմ գացած», խօսողը Յովսէփ Պալըզեանն է, որ արդէն թեւակոխած է 90 տարիքը: - Հայերէն խօսիլ, գրել եւ կարդալ սորվեցայ եկեղեցիին միջոցով»: Յովսէփին դէմքին վրայ գծուեցաւ փոքր ժպիտ մը, որ կ'արտայայտէր իր գոհունակութիւնը Հայ եկեղեցիին նկատմամբ: Յովսէփ փաստաբան է մասնագիտութեամբ: Ան աւելի քան 40 տարի եղած է եկեղեցիին Թաղական խորհուրդին ատենապետը: «Երբ տարեկան էի, երբ սկսայ եկեղեցի գալ եւ մոմ բռնել»: Եթէ այսօր Յովսէփի մոմ չի բռներ, բայց տակաւին հաստատ քայլերով կը յաճախէ եկեղեցի: Եթէ կը յաճախէ եկեղեցի, որովհետեւ, եւ ինչպէս որ ինք կ'ըսէ, «Հայութիւնը կը սիրեմ եւ պատիւ կը զգամ, որ հայ եմ: Ես կ'ուզեմ օգնել իմ ժողովուրդիս»:

Թագուհի Պագրըճեանը Հերակլիոն ծնած է: Ան ֆրանսերէնի

ինչպէս չըզակէ Արցախի ցաւը, երբ իր արմատները հոնկէ են: Վերջապէս, ինչպէս որ ինք ըսաւ: «Ես հարիւր առ հարիւր հայ եմ»:

Անտոնիս Պենարտիսը ծնած է Աթէնք: Բայց իր կեանքի սէրը, որ պիտի դառնար իր կողակիցը, գինք բերած է Հերակլիոն, եւ ան բնակութիւն հաստատած է այս գեղեցիկ քաղաքին մէջ: Անտոնիսի հայրը յոյն է, իսկ մայրը՝ հայ: Մօրենական մեծ ծնողքը եկած են Չմիւռնիայէն եւ անցած են Յեղասպանութեան անաւոր փորձառութեան մէջ: Անտոնիս կը պատմէ իր ընտանեկան պատմութիւնը, եւ ես կը տեսնէի իր դէմքի արտայայտութիւններէն, թէ որքա՞ն ցաւ շաղկած է ան: Չուշացաւ Անտոնիսի պատմութեան խրախուսիչ մասը. «Ես մեծցայ մեծ մայրիկիս հետ, եւ ան ինծի սորվեցուց ըսել՝ «Հայ եմ ես, հայ եմ ես, քաջ վարդանի թոռն եմ ես»»:

Անտոնիս այսօր կը կենայ իբրեւ «քաջ վարդանի» հայր: Ան ամուսնացած է հայուհիի մը հետ եւ ունի երկու զաւակ: Անտոնիս այսօր ստանձնած է եկեղեցիին Թաղական խորհուրդի ատենապետութիւնը եւ ոչ մէկ ճիգ կը խնայէ, որպէսզի վերաշխուժացնէ հայկական գաղութը:

Կրետէ նստած՝ կը դիտեմ,



ուսուցչուհի է: Թագուհին լծուած է Կրետէի հայ գաղութի արխիւներու ուսումնասիրութեան: «Թրքական արխիւներն ալ կ'ուսումնասիրեմ, քանի հոն հայերու մասին շատ տեղեկութիւններ կան», ըսաւ Թագուհի: Թագուհին ալ կ'ապրի հայուն ցաւը՝ Յեղասպանութիւնը: Այս ցաւը Թագուհին կը մղէ, որ աւելիով խօսի հայուն մշակութային եւ գրական ժառանգութեան մասին: «Կ'ուզեմ, որ յոյները աւելի ճանչնան հայուն մշակութային մեծ հարստութիւնը, ըսաւ Թագուհին:

Վիթալի Տէր Գրիգորեան կ'ապրի Կրետէի Խանիա քաղաքը, որ Հերակլիոնէն աւելի քան երկու ժամ հեռու է: Ան իր հինգ զաւակներով եկած էր Հերակլիոն՝ պատարագին ներկայ ըլլալու համար՝ Աստուածամօր Վերափոխման տօնին: Վիթալիի մեծ ծնողքը եղած են Արցախէն: Վիթալի ծնած է Գերմանիա, ուրկէ անցած է Ղազախստան եւ 2017-ին հասած է Կրետէ:

«Հպարտ հայ եմ, անկախ անկէ որ հայերէն չեմ գիտեր», ըսաւ Վիթալի: Վիթալիին կ'ապրի հայուն Յեղասպանութիւնը եւ անոր ցաւը: Ան իր սրտին վրայ կը շաղկէ նաեւ Արցախի ցաւը: Եւ

բայց նաեւ կը մտածեմ: Սփիւռքի մէջ որքա՞ն պայքար կայ: Պայքար՝ «պահելու համար արմատները»: Այս պայքարին մէջ կան գոհողութիւններ, ու տակաւին՝ ջանք եւ նուիրում: Նուիրում՝ մեր ինքնութեան եւ արմատներուն: Նուիրում՝ մեր պատմութեան եւ անոր արժանահաւատութեան: Նուիրում՝ մեր եկեղեցիին եւ ազգային կառուցներուն: Նուիրում՝ հայրենիքին եւ անոր սատարումին:

Դարձեալ Աննան. «Յեղասպանութիւնը մեր պատմութիւնն է: Մոռնալը անկարելի է: Պիտի չիչենք մեր ցաւով լեցուն պատմութիւնը, որպէսզի աւելի ուժեղ ապրինք»:

Յովսէփին է նորէն. «Հայերը մեծ ժողովուրդ են, բայց Հայաստանը պզտիկ է: Պիտի պահենք հայութիւնը եւ Հայաստանը, որպէսզի հոռմէացիներուն վախճանը չունենանք: Հայութիւնը՝ մեր արմատները, պիտի պահենք»:

Մեր արմատները պիտի պահենք: Հայաստան, սփիւռք եւ ամէն տեղ: Ուր որ հայ կայ:

Աննային արմատները: Կրետէի, իմ եւ համայն հայութեան արմատները:

Պիտի պահենք:

Խաչվերացի Տօնը

ՎԵՐ. ԴՈԿՏ. ՎԱՐԱՆ Յ. ԹՈՒԹԻԿԵԱՆ

Խաչվերացը համաքրիստոնէական բնույթ ունեցող տօն մըն է, որ շատ եկեղեցիներու կողմէ կը տօնուի Սեպտեմբեր 15-ին, իսկ Հայաստանեաց Առաքելական եկեղեցին կը տօնէ զայն Սեպտեմբեր 11-էն 17-ի միջեւ ամենամօտ կիրակի օրը:

Խաչվերացը, որ նաեւ կը կոչուի Վերացման Ս. Խաչ, բառացիօրէն կը նշանակէ Խաչը բարձրացնել, զայն յաղթականօրէն վեր առնել եւ փառաւորել:

Պատմականօրէն, եղելութիւնը հետեւեալն է.- 614 թուականին պարսիկները յարձակեցան Երուսաղէմի վրայ, բնակչութեան մեծ մասը կոտորեցին, ողջ մնացածները գերի տարին եւ Քրիստոսի խաչափայտը բռնագրաւելով Տիգրոն փոխադրեցին՝ զայն Խոսրով Բ. Փարվէզ Շահին հսկողութեան տակ դնելով: Ապա, Շահին զօրավարները շարունակեցին իրենց զինուորական արշաւն ու նուաճումները հասնելով մինչեւ Վոսփորի ափերը: Սակայն, Բիւզանդիոնի Հերակլէս Կայսրը իր բանակը զօրաշարժի ենթարկեց եւ կոստանդնուպոլսոյ մէջ վճռական յաղթանակ մը տարաւ պարսից դէմ: Պարսիկները չարաչար պարտուած նահանջեցին:

Հերակլէս Կայսրը ուխտեց ամէն գնով պարսիկ զրադաշտականներէն ազատագրել Ս. Քաղաք Երուսաղէմն ու գերապահուած խաչափայտը: Այդ առաջադրութեամբ ան ազատագրութեան քարոզչութիւն կատարեց Կիլիկիոյ, Հայաստանի եւ շրջակայ վայրերու մէջ ու սեպտեմբեր 15-ին պատրաստութիւններ տեսաւ եւ 627 թուականին, Հայաստանի լեռնազանգուտներու վրայէն անցնելով՝ հասաւ մինչեւ Նիսուէի աւերակներուն մօտ, Տիգրիս գետի ափին: Բախումները ծայր տուին ասեղ պատերազմի մը, որուն արդիւնքը պսակուեցաւ Բիզանդական բանակի փառապանծ յաղթանակովը: Հերակլէս, ի վերջոյ, յաջողեցաւ տիրանալ սրբազան գանձին, Յիսուսի Խաչափայտին:

Այնուհետեւ, Հերակլէս Կայսրը, համաձայն իր ուխտին, Խաչը Երուսաղէմ փոխադրեց մեծ շքախումբով մը: Ճանապարհին, շքախումբը անցաւ նաեւ Հայաստանի տարածքներէն՝ ստեղծելով արտակարգ ոգեւորութիւն:

Քրիստոսի Խաչը ազատագրուած էր հեթանոսներէն եւ վեր բարձրացուած էր: Ահա այսպէս, Խաչին պանծալի վերացումը նուիրագործուելով դարձաւ Խաչվերացի կամ Ս. Խաչի տօն: Սրտառուչ եւ դիւթական պատմութիւն մըն է Յիսուսի խաչափայտին վերադարձն ի Երուսաղէմ: Բայց Խաչին յաղթանակը աւելի խոր տարողութիւն ունի քան այն պատմական դէպքը: Խաչը խաչափայտէն աւելի բան մըն է: Խաչը Աստուծոյ սիրոյն եւ փրկագործութեան խորհրդանիշն է:

Խաչ եւ յաղթանակ կրնան արտաքնապէս զիրար հակասող իրականութիւններ թուիլ մարդոց: Հեթանոսներու եւ հրէից համար խաչի մահը ամենէն անարգ մահն էր: Հռոմէացիները խաչելով կը մեռցնէին միայն ամենէն վատ ոճրագործները: Մարդկային ակնոցով դիտած, Խաչը կամ Յիսուսի Խաչելութիւնը, անփառունակ պարտութիւն մըն էր: Յիսուսի թշնամիներ-



ըն՝ առաջին Աւագ Ուրբաթ իր Խաչին դիմաց կեցած քամահրանքով կը գոչէին, «Ուրիշներ ազատեց, ինքզինք չի կրնար ազատել» (Մարկ. 15.31):

Այո՛, խաչը «պարտութիւն» մըն էր, բայց այնպիսի «պարտութիւն» մը, որ մեծապէս գերազանց էր ամէն յաղթանակներէ, պարտութիւն մը, որ Սատանան անգամ սարսափեցուց: Պարտութիւններ կան, որ ամէնէն փառահեղ յաղթանակներու կ'առաջնորդեն: Երբ մարդիկ մէկ բանի համար կը «պարտուին» աւելի բարձր յաղթանակ մը տանելու համար, մենք չենք սգար այդպէս ասած «պարտութիւնը», այլ կ'օրհնաբանենք եւ կը գովաբանենք զայն:

Օրինակի համար, երբ ցորենահատիկը գետին իջնայ բնականաբար կորուստ մը տեղի կ'ունենտուէ: Բայց ինչպէս Յիսուս դիտել տուաւ, «Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի մինչեւ ցորենահատիկը չի յայտնուի, չի՛ կրնար առատ բերք տալ»: Պահ մը կ'ափսոսանք եւ կը ցաւինք այդ «մեռնող» հատիկին համար, բայց այդ ցորենահատիկը մէկի տեղ 30, 60, եւ 100 ապատիկ արդիւնք կու տայ:

Մենք, քրիստոնեաներս ամենէն աւելի լաւ կը հասկնանք այս խորախորհուրդ փորձառութիւնը երբ կը նայինք տիեզերքի ամենաեզական անձնաւորութեան՝ մեր Տիրոջ, Յիսուս Քրիստոսի կեանքին: Պահ մը կը ցաւինք Աւագ Ուրբաթուան տխուր դէպքին համար, բայց կը ցնծանք երբ քանի մը օր ետք կը հասնի Մէկշաբթի Առաւօտը, երբ Աւագ Ուրբաթին կը յաջորդէ «Հրաշալի Յարութիւնը»...:

Մենք կը տօնենք Քրիստոսի «պարտութիւնը», քանի որ գիտենք թէ այդ պարտութիւնը դարձաւ նախադուռը Մեծ Յաղթանակին: Այլապէս, ինչո՞ւ գուրգուրանքով պիտի պահէինք այդ պարտութեան ու անարգանքի նշան եղող խաչը: Ինչո՞ւ պիտի պահէինք զայն մեր կուրծքերուն վրայ, մեր եկեղեցիներու խորաններուն մէջ եւ գմբէթներուն վրայ, եւ ինչո՞ւ պիտի դարձնէինք մեր «Երկիր Դրախտավայր Հայաստանը» խաչքարերու երկիր...:

Ի՞նչ մեծ յարակարծութիւն (paradox): Մեծագոյն ոճիւրը որ մարդ արարածը գործած է՝ Յիսուսը խաչելով՝ սատար հանդիսացած է մարդոց հոգիներու վերացման: Խաչին մէջ կը յայտնուի մարդոց անարդարութեան լման չափը: Միանգամայն սակայն, Խաչը կը յայտնէ Աստուծոյ անծայրածիր եւ խորունկ սէրը՝ մարդ արարածին հանդէպ: Այսինքն, երբ մարդկութիւնը մեղքերու մէջ մեռած էր,

Աղթամարի Սուրբ Խաչ Եկեղեցւոյ Մէջ Պատարագ Մատուցուած Է



Վանայ լիճի ամենամեծ կղզին՝ Աղթամարի մէջ գտնուող Սուրբ Խաչ հայկական եկեղեցւոյ մէջ Կիրակի օր Սուրբ պատարագ մատուցուած է:

Պատարագին մասնակցած է Պոլսոյ Հայոց թեմի առաջնորդ Սահակ եպիսկոպոս Մաշալեանը, որ նախօրէին մեկնած էր Վան, հանդիպած Վանի նահանգապետին:

Մաշալեան նաեւ այցելած էր Վանի Վարագայ Սուրբ եկեղեցի, որ

վնասուած էր երկրաշարժէն, եւ աղօթք հնչեցուցած էր այնտեղ:

Սուրբ Խաչ եկեղեցւոյ վերակառուցումէն յետոյ թրքական կառավարութիւնը այնտեղ տարին մէկ անգամ պատարագ մատուցելու թոյլտուութիւն տուած է: Առաջին անգամ պատարագ մատուցելու թոյլտուութիւն թուրքիոյ կառավարութիւնը տուած է 100 տարի առաջ: Սովորաբար այստեղ պատարագ կը մատուցուի Խաչվերացի տօնին նախորդող Կիրակին:

Քրիստոս անոր համար մեռաւ, թէ «Աստուած այնչափ սիրեց աշխարհը (իմ մեղաւոր մարդկութիւնը) որ իր Միածին Որդին դրկեց, որպէս զի ով որ Անոր հաւատաց չկորսուի, այլ յաւիտենական կեանք ունենայ» (Յովհ. 3.16):

Երբ ոեւէ մարդ լրջօրէն մտածէ այս սրտաշարժ իրողութեան վրայ չի կրնար չ'ազդուիլ եւ ըսել ինքնիրեն, «Այս ինչ անմահ, անհասկնալի եւ չնաշխարհիկ սէր է, որ երկինքի թագաւորը երկիր կ'իջնէ ինձի պէս մեղաւոր մը մեղքի տիղմէն վերցնելու»: Գիտա-

կից ոեւէ մարդ չի կրնար չ'ազդուիլ երբ լրջօրէն կը խոկայ Պողոս Առաքեալի հետեւեալ խօսքին վրայ «Ձեզմէ իւրաքանչիւրը թող խորհի այն՝ ինչ որ կը տեսնէ Քրիստոս Յիսուսի մէջ, որ թէպէտ բնութեամբ Աստուած էր...բայց կամաւորաբար ինքզինք այդ պատիւէն մերկացուց... յանձն առնելով մահը եւ այն ալ խաչի մահը: Ատոր համար ալ Աստուած զայն շատ աւելի բարձրացուց... որպէս զի Յիսուսի անունին ծունկի գան բոլորը, երկնաւորներն ու երկրաւորները» (Փիլ 2.5-10):

Womenmen Ladies Auxiliary
invites you to
CIGAR NIGHT
Under The Stars
OCTOBER 4, 2024
8PM
Valuable Raffle Prizes!
DJ, Raffle, Maza & Dinner, Cigars & Outdoor Fun!
LOCATION: Clubhouse at Griffith Park
5500 Griffith Park Drive, Los Angeles, CA 90027
RSVP : Karine (818) 324-0574
Lena (626) 485-6434
Donation \$150
Includes Alcohol

ՄԻՋԱՉԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ Տանիէլ Տէֆօ՝ «Ռոպինսոն Քրուզօ»ի Անմահանուն Երգիչը

ՅԱԿՈՒՔ ՏԻՒՆԵԱՅԵԱՆ

Աւելի քան երեքուկէս դարու՝ 364 անցելատու տարիներու անշրպետէն կը խօսի անունը անգլիացի Տանիէլ Տէֆօ (Տանիէլ Ֆօ՝ բուն անունով, Սէն Ժիլ, Քրիստոֆօ, Լոնտոն, 13 Սեպտեմբեր 1660 - Լոնտոն, 24 Ապրիլ 1731) գրողին, արկածային ժանրի վիպագիրին, լրագրողին, քաղաքական երգիծագիրին, մինչ իր ծննդեան 364-ամեակին առիթով, 13 Սեպտեմբերին, կրկին լուսարձակի տակ կը բերուի յատկապէս աշխարհահռչակ իր «Ռոպինսոն Քրուզօ» վեպին ճառագայթուն իմաստութիւնը:

305 տարի առաջ՝ 1719-ին լոյս տեսած չիչեալ վէպը, աւետարանէն ետք այն երկրորդ գիրքն է, որ աշխարհի տարածքին ունեցած է բազմաթիւ լեզուներով թարգմանութիւն եւ սպառում, կը համարուի անգլիական գրականութեան վիպական սեռի առաջադիրներէն մէկը, որուն համբաւը ժողովրդականացաւ 18-րդ դարուն:

Տանիէլ Տէֆօյի ծննդեան ու կեանքին մասին ընդարձակ մանրամասնութիւններ չեն փոխանցած մեզի իր ժամանակի կենսագիրները, բայց հաստատապէս ան մասվաճառ ընտանիքի մը գաւակ որպէս, ունեցած է դժուար կեանքի ընթացք ու պայմաններ մանկութեան տարիներու: 1 Յունուար 1684-ին ամուսնացած է Մերի Թրֆօլիի հետ եւ ունեցած գաւակներ: Իր նախնիները բողոքականներ էին, որոնք 16-րդ դարուն, կրօնական պատերազմներու ժամանակ կաթոլիկ եկեղեցու յարուցած հալածանքներուն պատճառաւ Ֆրանսիայէն գաղթած էին Մեծն Բրիտանիա:

Միւս կողմէ, «Ռոպինսոն Քրուզօ» վէպը պատմութիւնն է նոյնինքն Ռոպինսոն անունով մարդու մը, որ շատ փոքր տարիքէն կ'երագրէր ծովագնաց դառնալ: Հայրը դէմ էր գաղափարին Ռոպինսոնի, որ մտիկ չընելով հօր՝ կը լքէ ընտանիքը ու նաւով կը մեկնի: Ծովուն բացերը նաւը կը հանդիպի կոհակներու եւ կը խորտակուի. խեղդամոռն կ'ըլլան բոլորը եւ միայն ինք փրկուելով կը հասնի ծովափ: Ռոպինսոն կը յայտնուի անմարդաբնակ կղզիի մը մէջ եւ հակառակ տեղի բոլոր դժուար պայմաններուն՝ կը յաջողի դառնալ ինքնաբաւ եւ ստեղծել անհրաժեշտ կենսապայմաններ: Սակայն իր փրկութեան ուրախութեան կը յաջորդէ վիշտը իր ընկերներու կորստեան: Առաջին գիշերը կ'անցընէ ծառի մը վրայ: Առաւօտուն կը տեսնէ որ մակընթացութիւնը ծովափին մօտեցուցած է իրենց նաւը: Նոյնհետայն կը մտածէ, որ ընկերները կրնային ողջ մնալ՝ եթէ չլքէին նաւը: Ռոպինսոն իսկոյն լողալով կը հասնի նաւուն, պահեստային առագաստներէն կը շինէ լաստ, որուն վրայ կը բեռնէ կենսական իրեր՝ հրացան, վառօդ, գործիքներ, սուրբեր եւ կը տանի փի: Նոյն գիշերը փոթորիկը կ'ոչնչացնէ նաւը: Այս բոլորէն ետք Ռոպինսոնի առաջին եւ գլխաւոր մտահոգութիւնը կ'ըլլայ շինել տուն մը՝ պատասխարուելու համար: Բլուրի մը տակ հարթ տարածութեան




մը վրայ կը շինէ տնակ մը՝ գայն ցանկապատելով: Այլ մտահոգութիւն մը եւս կ'աւելնայ իրմիտքին մէջ: Պէտք է սորվի, ներդաշնակուի, մերուի շրջապատի նոր ուստար օրէնքներուն հետ: Կը զբաղի հողագործութեամբ եւ կ'ընտելանայ կղզեբնակ այժերուն ու այլ կենդանիներու հետ: Իր պարկէն գետին ինկած ցորենի քանի մը հատիկներէն բերք կը ստանայ ու երկու տարի ետք կ'ունենայ ուտելու հաց: Չկորսնցնելու համար ժամանակի զգացողութիւնը եւ որպէս իր քաղաքակրթութեան հաւատարիմ գաւակ՝ օրացոյց կը պահէ եւ օրագրութիւններ կ'ընէ փայտի վրայ, հետեւողականօրէն գրառումներ կը կատարէ առօրեայ դէպքերու, մասնաւորապէս՝ իր փրկութեան փաստի մասին: Օրացոյցի թուագրումը կը սկսի 1659-ի 30 Սեպտեմբերին: Ի դէպ, Ռոպինսոնին կը միանայ նաւաբեկումէն փրկուած շունը, երեք կատուներն ու խօսող թութակը: Օր մըն ալ երկրաշարժը կը ստիպէ որ ան փոխէ իր կեցութեան վայրը՝ վտանգ զգալով բլուրի տակ ապրելով: Կ'ապրի վատառողջ օրեր, սակայն ապաքինելէ յետոյ կը սկսի նոր հետախուզութիւններու կղզիին վրայ եւ կը կառուցանէ իր ամառանոցը: Բայց Ռոպինսոնի երազն էր լքել կղզին ու մօտենալ մարդոց: Կղզիին հարաւային դիրքերէն կը դիտէ ցամաքի մը յայտնուիլը: Արկածալից տարիներ անցընելէ յետոյ ու ծառանալով բազում դժուարութիւններու՝ կը յաջողի իւրացնել բրոնտազործութիւնն ու զամբիւղ շինելու արհեստները: Օր մըն ալ պատահականօրէն իր շրջապատէն ներս կը նկատէ մարդկային մերկ ոտնահետքեր: Նախ կը սոսկայ ու կը սարսափի՝ մտածելով որ այդ ոտնահետքերը կրնան պատկանիլ ցամաքի մը մօտ վայրէջի բնիկներու, որոնք սովորութիւն ունին մարդու միս ուտելու: Այսպէս, ի տես մարդակերներու տեսարանի, հերոսատիպ Ռոպինսոնի կեանքը կը լեցուի նոր ու հաճելի հոգերով, արկածախնդրական դիպաշարերով: Վայրենիին՝ գոր Ռոպինսոն փրկութեան օրուան առթիւ Ուրբաթ կը կոչէ, ընդունակ աշակերտ մըն է, որուն խօսակցական լեզու կը սորվեցնէ: Շատ կ'ուրախանայ, մտածելով որ այդ անմարդաբնակ կղզիին մէջ կայ իրապէս մարդ, որ վայրի ցեղի մը կը պատկանի եւ այդ մարդուն անունն ալ Ուրբաթ է: Ուրբաթ եւ Ռոպինսոն մտերմութիւն կը հաստատեն իրարու հետ: Վերջինը

խօսիլ կը սորվեցնէ Ուրբաթին, որ սակայն քիչ մը անկանոն ձեւով կը խօսի, կը պատմէ, թէ իր ցեղակիցները մայր ցամաքի վրայ սպանացի 15 գերիներ կը պահեն: Ռոպինսոն կ'որոշէ նաւ շինել ու երթալ գանոնք ազատելու: Այդ դէպքերէն շաբաթ մը ետք փի կը հասնին անգլիացի նաւաստիներ, որոնք որոշելով զբաղի ծովահնութեամբ՝ կ'ապստամբին նաւապետին դէմ եւ գայն ու նաւուն անձնակազմի քանի մը անդամները կղզի կը բերեն հաշուեյարդար տեսնելու: Ռոպինսոն կը յաջողի ազատել նաւապետը ու ճնշել ապստամբներուն, որոնցմէ երկուքին կը բարձրացնեն կախաղան եւ երեքին ալ կը ձգեն կղզի:

28 տարի 2 ամիս եւ 19 օր կղզիին մէջ անցընելէ ետք, 1686-ի Յունիսի 11-ին Ռոպինսոն կը վերադառնայ Անգլիա, ուր վաղուց մահացած էին իր ծնողները: Կը յաջողի վերադարձնել Պրագիլիոյ իր հողերէն այսքան տարիներ ստացած եկամուտը, իր հոգածութեան տակ կ'առնէ երկու երիտասարդ ազգականներու եւ կ'ամուսնանայ 61 տարեկանին: Կ'ունենայ երկու որդի եւ մէկ դուստր:

Ծաւալուն վէպի մը ամփոփումը կատարելու մեր այս ճիգը, միտքերը իրարու ազուցելու, այլեւ 28 տարուան «կորսուած» կեանքի մը ակօսներովը քալելու Ռո-



պինսոնի ողիսականը, աշխարհի բազմաթիւ ժողովուրդներու անխառն ապրումներուն հանրագումարն է: Եւ իրօք, արկածախնդրութիւններու հանդէս են մեր ապրած կեանքն ու ստեղծագործական ճիգերը: Մանաւանդ երբ անոնց տառապակոծ, կիզուած, այլակերպուած զգայարանքներու, ամբհի ու ամաչի սարսափներու ծորումները գրական հոգեխառնութեան մը մէջ չեն վախճար հինալէ՛ իբրեւ փաստ ու իրականութիւն, նաեւ իբրեւ հաշուեյարդար, աւելին՝ ունին գուպարայաղթ նուաճման հասնելու պաշտպանութիւն միլիոնաւոր ընթերցողներու միտքերուն մէջ եւ պիտի ունենան դարեր շարունակ: Արդարեւ, կեանքի յարաճուն պայքարներու ընթացքին, դժուարութիւններ ու անակնկալ փորձութիւններ դիմակայելու մարդուն իմաստութիւնը, անտարակոյս ունի «լեռներ շարժող» հաւատք՝ կարենալու համար ապրի՛լ ու գոյատեւել՛լ. ապրիլ ինքնաբաւ եւ շատ ժուժկալ՝ տակաւ առ տակաւ քանդելու սնապարծութիւնն ու խժողութ փառամոլութիւնը իր մէջ, թեւեր հագնելու համամարդկայնական թռիչքնե-

րու՝ կործանելու ներքին ուտիչ ուրացումին ետեւիւնը մեծակառուց, գոր աճեցնելու հակամէտ է մարդը դարերու ընթացքին:

Տանիէլ Տէֆօյի ստեղծած կերպարները իր սոյն վէպին մէջ, ի՛ր իսկ չընկրկող կամքը, հաստատակամութիւնը, կը կազմեն բոլոր ժամանակներու մեր հասարակութեանց տուած երգումն ու համոզումը: «Ռոպինսոն Քրուզօ»ն իբրեւ «նախահայր»ը եւրոպական վիպագրութեան՝ կը կրէ Բարիին ու Չարին միջեւ այն բախումները, որոնք անցած են գուհիներէն գեհնի եւ կա՛ն աւետարանի արեան կայլակներուն մէջ, տրորելու՝ պատրաստ ամէն պատրանք եւ ունայնութիւն, որոնք կը պաշարեն առանձնութեան մէջ տուայտող ու խաղաղութեան փի հասնելու ճգնող մահկանացուն:

«Ռոպինսոն Քրուզօ»ի յղացքին քանքարայնութիւնը ա՛յնքան է եղած տիրական ու թողած խոր ազդեցութիւն ամէն տարիքի ընթերցող, ուսանող մարդու մէջ, որ անիկա չի զիջի իր մեծութիւնը՝ խոնարհելու Տէֆօյի միւս գործերուն վրայ, հետեւաբար ալ մեծագոյն տուրքը տալով այդ միջազգայնօրէն ճանաչուած գործին:

Բայց անարգար պիտի ըլլանք՝ հանդէս չգալով գրողին միւս գործերուն ընդառաջ: Նիւրիկթըն կրին աքատեմիս աւարտած, գինեվաճառութեամբ ու բրդավաճառութեամբ զբաղած, մինչեւ սնանկութեան եզրին ալ հասած, այլեւ քաղաքականութեան մէջ բուռն հետաքրքրութիւն ցուցաբերած Տանիէլ Տէֆօ, ժամանակ ունեցած է ստեղծագործելու գրական բազմաթիւ գրքոյքներ, գիրքեր, որոնցմէ առաջինը լոյս տեսած է 1683-ին՝ 23 տարեկանին: Մինչեւ 1700-ի սկիզբները, իբրեւ լրագրող, ան շարունակած է գրել քաղաքական բնոյթի գործեր՝ աշխատելով գրել ի նպաստ Ուիլիամ Գ. Թագաւորին: «Ջտարիւն Անգլիացիին» (1701), օրինակի համար, չափածոյ երգիծական գործ մըն է, որ կը խարազանէ օրուան ազնուապետականները՝ արշաւելով անոնց օտարամոլութեան դէմ: Իր խմբագրած «Ռիվիոլ» պարբերաթերթին մէջ, Տէֆօ հատու քննադատութիւններով յաճախ կը պատասխանէր քաղաքական իր հակառակորդներուն: Յաջորդ տարի, 1702-ին՝ «Հերձուածողներու Հետ Դատաստան Տեսնելու Ամենակարճ Ճանապարհը», որուն պատճառով Տէֆօ դատապարտուելով անարգանքի սիւնին՝ կրած է բանտարկութիւն:


«Ռոպինսոն Քրուզօ» վէպին հրատարակութենէն երեք տարի ետք լոյս կը տեսնէ՝ նաեւ լաւագոյններու շարքին համարուող «Մոլ Ֆլենտերս» (1922) վէպը: 1725-ին՝ «Իւրաքանչիւրին Առեւտրական Գործը Ո՛չ Մէկուն Առեւտրական Գործն է», 1927-ին՝ «Ամուսնական Յոփութիւն» կամ «Ամուսնական Պոռնկութիւն» արձակ էջերը:

Յիրաւի, բազմաթիւ երկերու հեղինակ է Տանիէլ Տէֆօ: Իր գործերէն շատերը՝ մանաւանդ «Ռոպինսոն Քրուզօ»ն, մեծ պատասխան վրայ բազմիցս եւ ցայսօր նկարահանուած ու ցուցադրուած է միջազգային հանրութեան, ամէն անգամ խլելով հետաքրքրութիւնն ու հիացքը միլիոնաւոր ակնդիրներու:

«Աղթամար»-«Ծաղիկ»

Նոր հրատարակութիւն՝ «The Deaconesses of the Armenian Church»

Վերջերս լոյս տեսաւ դոկտ. Աբել Քհնյ. Մանուկեանի «The Deaconesses of the Armenian Church» խորագրով անգլերէն աշխատասիրութիւնը: Առկան կը հանդիսանայ Ֆրիպուրկի համալսարանի էքումենիք ինստիտուտի Studia Oecumenica Friburgensia մատենաշարի 113-րդ հատորը, որ հրատարակուեցաւ Aschendorff Verlag-ի կողմէ օգոստոս 2024 թուականին Միւնխիւմի մէջ:



Գիրքը կը հանդիսանայ հեղինակին տարիներու լուրջ եւ հետեւողական հետազոտութեանց արդիւնքը եւ լոյս կը սփռէ քրիստոնեայ եկեղեցիներու մէջ կարեւոր, բայց յաճախ անտեսուած աւանդոց մը վրայ՝ կանանց դերը որպէս ձեռնարկուած սարկաւազուհիներ: Յատկապէս կեդրոնանալով Հայ առաքելական եկեղեցու աւանդութեան վրայ՝ ան կը քննէ պատմական այն կարեւորագոյն դերակատարութիւնը, որ սարկաւազուհիներ ունեցած են քրիստոնեայ համայնքներու կեանքին մէջ: Արդարեւ, հեղինակը փաստացի վկայութիւններով ցոյց կու տայ, թէ կանայք որպէս սարկաւազուհիներ ինչպիսի՜ նշանակալից ներդրումներ ունեցած են եկեղեցու թէ՛ ծիսական եւ թէ՛ ծառայասիրական առաքելութեան մէջ:

Հռոմէական կաթողիկէ եկեղեցիներուն մէջ լուրջ խօսուածք մը կը զարգանայ այս հնագոյն աւանդութիւնը վերականգնելու ուղղութեամբ, «The Deaconesses of the Armenian Church» հատորը ակադեմիական կարեւոր տուեալներ եւ նոր հեռանկարներ կը հաղորդէ աստուածաբաններու, պատմաբաններու, նաեւ բոլոր անոնց, որոնք հետաքրքրուած են արծարծուած նիւթով: Գիրքը այժմ հասանելի է եւ կարելի է պատուիրել ուղղակի Aschendorff Verlag-էն:

Հայաստան Արցախ Ֆոնտը \$2.2 Միլիոն Արժէքով Դեղորայք Հայրենիքին

Անցեալ շաբաթ, Հայաստան Արցախ Ֆոնտը երկու անջատ առաքումներով եւ \$2.2 միլիոն ընդհանուր արժէքով դեղորայք ուղարկեց Հայաստան: Առաքումները կը ներառեն արեւան քաղցկեղէ տառապող հիւանդներու համար հրատապօրէն անհրաժեշտ երկու դեղատեսակներ՝ Velcade՝ \$1,122,100 ընդհանուր արժէքով, եւ Kovaltry՝ \$1,100,000 ընդհանուր արժէքով: Kovaltry-ն կը գործածուի կանխելու համար արիւնահոսութեան զէպքեր, եւ յատկապէս այն արիւնահոսութիւնները, որոնք կրնան պատահիլ վիրաբուժութենէ առաջ կամ ետք: Սոյն դեղերը առաքուեցան Հայաստանի Առողջապահութեան Նախարարութեան: Հայաստան Արցախ Ֆոնտը երախտապարտ է Direct Relief կազմակերպութեան՝ այս արժէքաւոր դեղերու նուիրաբերման համար: Անցեալ 35 տարիներուն, Հայաստան Արցախ Ֆոնտն ու գայն

նախորդած Միացեալ Հայկական Ֆոնտը Հայաստանին ու Արցախին հայթայթած են 1 միլիոն եւ 55 միլիոն տոլար ընդհանուր արժէքով մարդասիրական օժանդակութիւն, 158 թուիքներով եւ 2,594 ծովային արկղերով: «Հայաստան Արցախ Ֆոնտին կանոնաւորաբար կ'առաջարկուի, բոլորովին անվճար կերպով, միլիոնաւոր տոլար արժէքով կեանք փրկող դեղեր եւ բժշկական պիտոյքներ», յայտնեց Հայաստան Արցախ Ֆոնտի Նախագահ Յարութ Սասունեան. «մեզի կը մնայ հոգալ առաքման ծախսը միայն: Ուրեմն կը քաջալերենք ձեր առատաձեռն նուիրատուութիւնները, որպէսզի կարենանք շարունակաբար այս կենսական օժանդակութիւնը ուղարկել Հայաստանի բոլոր բժշկական կեդրոններուն»: Յաւելեալ տեղեկութեան համար, կը խնդրուի դիմել Հայաստան Արցախ Ֆոնտի գրասենեակին. հեռաձայնի թիւ՝ (818) 241-8900. իմէյլի հասցէ՝ sassoun@pacbell.net:

Դիմադրութեան Շարժման

Շարունակուած էջ 2-էն

դեցուցիւն ունէին իրենք: Ոնց եղաւ, որ էս պրոցեսը դարձաւ «Դիմադրութիւն-2» շարժում: Հիմա ուզում էք ասել՝ ով դուրս գա փողոց, արդիւնքը լինելու ա նոյնը, դրսեւորումը նոյն ա լինելու՞ «Սիթի-տուր»-եր, վերջում՝ Բաղրամեան, իմպիչմենտ, ու վերջ, տուն գնա՞լ...»:

Սա նշանակում է, որ եթէ Գալստանեանի գլխաւորած, այսպէս կոչուած, «սրբազան» շարժմանը հաւատացող-համակրող քաղաքացիները ծրագրել են մասնակցել դրա յառաջիկայ որեւէ մասշտաբային միջոցառման, ապա պէտք է իմանան՝ մասնակցելու են նախկին ռեժիմի կողմից վերահսկուող օպերացիայի, որի նպատակն ամենեւին էլ Նիկոլ Փաշինեանի եւ նրա իշխանութեան կողմից իրականացուող քաղաքականութեանն ընդդիմանալը չէ՛ սահմանազատում, ինչպէս թեան պայմանագիր, ԼՂՀ խնդիր եւ արցախահայութեան վերադարձ... այլ գործող իշխանութեան քաղաքականութեանն ընդդիմանալով՝ ընդդիմութեան տիտղոսը պիտի պահելն ու այլընտրանքային ընդդիմադիր ուժերի ասպարէզ գալը չէ՛զոքացնելը:

Ի դէպ, դեռ յուլիսին եւրոպական վոյսթից վերադարձած, շարժման երեւանեան հաւաքներին մէկումէջ ծիւրահող իշխան Սողաթեանը հարցազրոյց էր տուել եւ խօսելով շարժման, ընդդիմութեան խորհրդարանական անելիքների ու մասնաւորապէս մանդատները վայր դնելու մասին՝ անկեղծացել էր. «էդ հիմնաւորումը, որ՝ «մանդատը վայր դրէք, փողոցը կը լցուի»»,

էդ գիտէ՞ք որն ա, որ ասում են՝ եթէ դուք չլինէք, մի հատ ազնիւ, մաքուր, նոր մարդ լինի, հրապարակները լեփ-լեցուն կը լինեն, ու հարցը կը փակուի: Ես սրբազանի պէս ազնիւ, մաքուր, սրբազան, սուրբ մարդ (քթի տակ ժպտալով խմբ...)... չէր կարայ հրապարակ իջնէր, հասկանում էք էդ բլեֆը»:

Սողաթեանի ասածը ուղիղ խոստովանութիւն է այն մասին, որ ՀՀ-ում չկայ իշխանափոխութեան հանրային պահանջարկ (եթէ լինէր, հրապարակները լեփ-լեցուն կը լինէին), այն գեներացում է արհեստականօրէն, իշխանազատութեանների կատարմամբ ու նրանց արտաքին հովանաւորների թելադրանքով: Եւ նոյնիսկ Գալստանեանի պէս «սրբազան ու այլ բարեմասնութիւններով օժտուած» մարդուն քաղաքական խաղի մէջ ներքաշելով ու «խաչի գորութիւնն» օգտագործելով՝ այդ սուբեկտներին չյաջողուեց եւ Սեպտեմբերին ու առաջիկայ ամիսներին էլ (մինչեւ սրբազանի նշած յաջորդ Մայիսը) չի յաջողուելու «չոուն» տրամաբանական աւարտին հասցնել:

Հետեւապէս, անկեղծ ու բարոյական լինելու պարագայում առաջիկայ հաւաքի ժամանակ այս՝ ռեբրենդինգի ենթարկուած, իրականում՝ «Դիմադրութիւն-2» շարժման կուլիսային շահառուները պէտք է դուրս գան «փարդի հետեւից», Գալստանեանին շնորհակալութիւն յայտնեն մատուցած ծառայութեան, ժողովրդից էլ ներողութիւն խնդրեն իսբա տալու համար ու ցրվեն տներով՝ չմոռանալով ազդարարել՝ «Ֆենտայ լա կոմեդիայ»: Այժմ եւ ետախուս:

«ՀԱՅԿԱԼԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

Յարութիւն Երեւան Կուժունիի

Շարունակուած էջ 13-էն

գոյն վարժարանը հանդիսացող «Սահակեան կրթական օժանդ» օժտել նոր, արդիական կառուցող, ուր գային պատրաստուելու հայաչունչ ոգիով եւ շունչով հայ մանուկներ, պատանիներ, երիտասարդներ Լիբանանէն եւ արտասահմանէն՝ պատրաստելով ուսուցիչներ հեռուոր հայկական գաղութներու համար: Ուստի հանգանակութիւնը տուաւ լաւ արդիւնք եւ 1973-1974 թուականներուն գնուեցաւ հողը եւ իրականութիւն դարձաւ Սահակեան-Լեւոն Մկրտիչեան Քոլէճի արդիական շէնքը Պէյրութի գետին աջ ափին՝ Սին-էլ-Ֆիլի գեղատեսիլ շրջանին մէջ:

է մեր հողին վրայ» եւ կոչ ըրաւ համազգային միացեալ դիրք ճշդելու: Բարեբախտաբար հայ ազգային երեք կուսակցութեանց փորձառու ղեկավարները անմիջապէս իրարու քով եկան եւ որդեգրեցին Յ. Կուժունիի առաջարկած «դրական չէզոքութիւն» ուղեգիծը եւ հիմը դրին կուսակցական ժողովներու, որոնք շարունակուեցան ամբողջ պատերազմի ընթացքին ի շահ Լիբանանին եւ հայ ժողովուրդին:

Դժբախտաբար, 13 Մայիս 1976-ի գիշերը, յանկարծակի ուղեղային տագնապի պատճառաւ վերջ գտաւ ազգային-հասարակական, կուսակցական, քաղաքական բազմաձիւղ եւ հարուստ վաստակաւոր այս մեծ մարդուն կեանքը: Իր համազգային թաղման առիթով խօսուած դամբանական ճառերը, յետմահու դրուած բազմաթիւ յօդուածները եղան իր կարճ ու բեղուն կեանքին ծաղկապսակները: «Լիբանանահայութեան դեկավարի տիպարներէն՝ Յարութիւն Կուժունի», իմբազիր՝ Պէպօ Սիմոնեան, Պէյրութ 2002

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ԸՈԳԻ ԸԱՄԱՐ)

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ԸՆՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

Ազգերի Լիգա. Սպանիան Խնդիրներ Զուներցալ Շուեյցարիայի Զետ 4:1



Ազգերի Լիգա. Սպանիան Խնդիրներ Զուներցալ Շուեյցարիայի Զետ 4:1

Սպանիայի կոլեբը նշանակեցին Խոսելուս, Ֆապիան Ռուբիսը (2 կոլ) եւ Ռոպին Լէ Նորմանը:

A լիգայի չորրորդ խումբին մէջ Սպանիան 4 կէտով կը գրաւէ երկրորդ եւ 2 կէտ տետ է առաջատար Դանիայէն, որ աւելի կանուխ երկրորդ հանգրուանին 2:0 արդիւնքով յաղթած էր սերպերուն:

Զուեյցարիան երկու պարտութենէն յետոյ վերջին տեղը կը գտնուի:

Միւս հնդիպումներուն արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.

- A լիգա, երկրորդ խումբ Պելճիքա - Իսրայէլ՝ 3:1
- B լիգա, երրորդ խումբ Ղազախստան - Նորվեգիայ՝ 0:0
- Սլովենիայ - Աւստրիա՝ 1:1
- Չորրորդ խումբ Իսլանդիայ - Չեռնոգորիա՝ 2:0
- Ուելս - Թուրքիայ՝ 0:0
- C լիգա, երկրորդ խումբ Լիտուայ - Կիպրոս՝ 0:1
- Քոստո - Ռումանիա՝ 0:3
- B լիգայի երկրորդ խումբ Անգլիա-Իռլանտա 2:0
- C լիգայի առաջին խումբ Ատրպէյջան-Սլովակիա 0:2

ԱԱ-2026. Պրագիլի Ընտրական Խաղին Յաղթեց Էքուատորին

Աշխարհի առաջնութեան հարաւամերիկեան գօտիի ընտրական մրցաշարին Պրագիլի հաւաքականը ընդունեց էքուատորի խումբին եւ առաւելութեան հասաւ նուազագոյն արդիւնքով:

Միակ կոլը 30-րդ վայրկեանին նշանակեց Մատրիտի «Ռէալի» յարձակող Ռոտրիկոն:

Պրագիլա 7 խաղէն յետոյ 10 կէտով չորրորդն է: Էքուատորը 8 կէտով 6-րդ տեղն է: Առաջատարը աշխարհի ախոյեան Արժանթինն է՝ 18 կէտ: Սեպտեմբերի 11-ին պրագիլցիները կը հիւրընկալեն Փարակուային:

Եանիկ Սիները Եւ Արինա Սապալենկա US Open-ի Ախոյեան



Աշխարհի առաջին ռակէտ Եանիկ Սիները նուաճեց թենիսի ԱՄՆ-ի բաց առաջնութեան ախոյեանի տիտղոսը:

Եզրափակիչին ան 6:3, 6:4, 7:5 արդիւնքով պարտութեան մատնեց աշխարհի 12-րդ ռակէտ, ամերիկացի Թէյլոր Ֆրիցին: Պայքարը տեւեց 2 ժամ եւ 16 վայրկեանին:

23-ամեայ իտալացի թենիսիստն առաջին անգամ նուաճեց US Open-ի տիտղոսը: Այս տարի ան յաղթած է նաեւ Աւստրալիոյ բաց առաջնութեան՝ նուաճելով «Մեծ Սաղաւարտի» մրցաշարի առաջին տիտղոսը:

Ազգերու Լիգա. Զայաստանի Զաւաքականի Յաղթական Սկիզբը՝ 4:1



Ֆուլթայլի Հայաստանի Ազգային Հաւաքականը յաղթանակով սկսաւ Ազգերու լիգային մէջ:

C լիգայի չորրորդ խումբի առաջին հանգրուանին ուքրանացի ԱլեքսանԾր Փեթրակովի գլխաւորած խումբը ընդունեց Լատուիայի հաւաքականին եւ առաւելութեան հասաւ 4:1 արդիւնքով:

Երեւանի վազգէն Սարգսեանի անուան «Հանրապետական» անցկացուած հանդիպման կոլերը նշանակեցին վահան Բիչախչեանը, Լուկաս Սէլարայեանը եւ էտուարտ Սպերցեանը:

Այս խումբի առաջին հանգրուանի միւս խաղին Ֆարերեան Կղզիներու եւ Հիւսիսային Մակեդոնիայի հաւաքականները խաղցած էին հաւասար՝ 1:1:

Իտալիան Պարտութեան Մատնեց Ֆրանսային

Ֆուլթայլի Ազգերու լիգայի A լիգայի երկրորդ խումբին մէջ Իտալիոյ հաւաքականը հիւրընկալեց ֆրանսացիներուն եւ յաղթանակի հասաւ 3:1 արդիւնքով: Նոյն խումբին մէջ պելճիկացիները 3:1 արդիւնքով պարտութեան մատնեցին Իսրայէլի խումբին:

Զամաշխարհային Շախմատային Օլիմպիատա Զայաստանի Զաւաքականը Ունի 17-րդ Վարկանիշը

45th Chess Olympiad 10.09.2024 - 23.09.2024 **Team Armenia**

Հունկարիայի մայրաքաղաք Պուտայեշտի մէջ Սեպտեմբերի 11-ին սկսած Համաշխարհային շախմատային օլիմպիատայի մէջ Հայաստանի հաւաքականը ունի 17-րդ վարկանիշը (2645):

Խումբին մէջ ընդգրկուած են Հայկ Մ. Մարտիրոսեանը (2667), Շանթ Սարգսեանը (2649), Գաբրիէլ Սարգսեանը (2646), Ռոպեր Յովհաննիսեանը (2619) եւ Կարէն Հ. Գրիգորեանը (2569):

Վարկանիշային առաջատարն է ԱՄՆ-ի հաւաքականը (2757), որու կազմին մէջ ընդգրկուած են Ֆապիանո Քարուանան (2798), Ուելսի Սոնը (2752), Լէնիըր Տոմինկեար (2748), Հայաստանի հաւաքականի նախկին առաջատար Լեւոն Արոնեանը (2729) եւ Ռեյ Ռոպսոն (2700):

Օլիմպիատայի կը տեւէ մինչեւ Սեպտեմբերի 22-ը, որուն ընթացքին կը կատարուի 11 մրցափուլ: Սեպտեմբերի 17-ին հանգստեան օր է:

Կանանց մրցաշարին աշխարհի երկրորդ ռակէտ Արինա Սապալենկան նուաճեց ախոյեանի տիտղոսը, որու համար ստացաւ նաեւ 3,6 միլիոն տոլար:

Կանանց մենախաղի եզրափակիչին Պելաուուսի ներկայացուցիչը մրցեցաւ աշխարհի 6-րդ ռակէտ, ամերիկացի ձեսիքա Փեկուլայի հետ եւ յաղթեց 7:5, 7:5 արդիւնքով: Պայքարը տեւեց 1 ժամ եւ 53 վայրկեան: ՍՏ Օpen-ի մրցանակային հիմնադրամը 75 միլիոն տոլար էր:

ARMENIAN
INDEPENDENCE DAY
FESTIVAL

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՆ
ՓԱՌԱՏՈՆ



SUNDAY
SEPTEMBER
22
2024
11:00AM

VERDUGO PARK
GLENDALE

1621 CANADA BLVD
GLENDALE, CA 91208

ORGANIZED BY
NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION

To reserve your vendor booth, please call Nor Serount Cultural Association
Ձեր կրպակները ապահովելու համար, հեռաձայնեցեք՝ Նոր Սերունդ Միությանը

For More Info:
(818) 391-7938 | www.norserount.com



FREE
ADMISSION
ՄՈՒՏՔԸ
ԱԶԱՏ

Live Music |
Armenian Food
Kids Games |
Arts & Crafts